ՆՊԱՏԱԿ

ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիայի պաշտոնաթերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1996 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ
16—31 ՄԱՅԻՍԻ 1995 Թ., № 8 (51)
ԳԻՆԸ՝ 25 ԴՐԱՄ

ՕՐՎԱ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Գիտական մտքի գնահատման չափանիշը

ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ, ՀՀ ԳԱԱ ՓՈԽՊՐԵԶԻԴԵՆՏ

Խոսելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի և նրա համակարգում գործող ինստիտուտների գործունեության և նրանց առջև ծառացած կարևորագույն խնդիրների մասին, ուզում եմ նախ դրական առումով գնահատել բաժանմունքի նախաձեռնությունները՝ միջազգային լայն համագործակցություն ծավալելու ուղղությամբ: Բացի նրանից, որ այսօր առանց միջազգային գիտական սերտ կապերի առհասարակ անհնար է գիտության զարգացումը, միաժամանակ մեր կյանքում ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական նոր իրադրությունը ինքն է թելադրում դրա անհրաժեշտությունը: Գիտական միտքը, անկախ այն հանգամանքից, այն հիմնարար ուղղվածություն ունի թե կիրառական, պետք է ունենա իր համապատասխան «գիտական շուկան»: Մենք քաջ գիտակցում ենք, իհարկե, որ միջազգային չափանիշներով գիտական այդ «շուկայում» գործում են բավականին դաժան և անհաշտ օրենքներ, սակայն եթե մենք ցանկանում ենք, որ գիտական միտքը գոյատևի և զարգանա Հայաստանում, այս գործոնի հետ հաշվի չնստելու իրավունքը չունենք:

Բաժանմունքը աշխատանքներ է ծավալել միջազգային մի շարք հիմնադրամներից համապատասխան դրամաշնորհներ ստանալու ուղղությամբ՝ տեղում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման համար: Վերջերս եռակողմ պայմանագիր կնքվեց ԱՄՆ-ի Առողջության ազգային ինստիտուտի, Հայաստանի առողջապահության նախարարության և գիտությունների ազգային ակադեմիայի միջև բժշկակենսաբանական հետազոտությունների ասպարեզում համագործակցված ուսումնասիրությունների ծավալման ուղղությամբ: Այդ պայմանագիրը նախատեսում է գիտական տեղեկատվության և մասնագետների փոխանակում, համատեղ գիտական հետազոտությունների իրականացում, գիտական կադրերի պատրաստում և կատարելագործում ԱՄՆ-ի Ազգային ինստիտուտի գիտահետազոտական կենտրոններում, Հայաստանում գիտական տեղեկատվական համակարգի զարգացման խթանում և մի շարք այլ համատեղ ծրագրեր: Գիտական համագործակցության բնագավառում նախապատրաստական աշխատանքներ են տարվում նաև մի շարք այլ միջազգային գիտական հիմնադրամների, կազմակերպությունների, ակադեմիաների հետ՝ ԻՆՏԱՍ, «Աշխարհի լաբորատորիա», Կապիցայի հիմնադրամ, Ավստրալիայի Քվինսլանդի համալսարան, ՆԱՏՕ, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարություն, Միջազգային գիտական հիմնադրամ և այլն:

Արդեն գործողության մեջ են մտել Ռուսաստանի Դաշնության և Մեծ Բրիտանիայի թագավորական ընկերության միջև կնքված պայմանագրերը: Մեր գիտնականները պետք է բարձր ակտիվություն դրսևորեն գիտական արդյունավետ համագործակցությունը զարգացնելու բնագավառում, հատկապես շեշտը դնելով գիտական այնպիսի թեմաների ընտրության վրա, որոնք մրցունակ լինեն թե՛ հիմնարար և թե՛ կիրառական տեսակետից և իհարկե առաջին հերթին բխեն հանրապետության շահերից: Այս տեսակետից մեծ անելիքներ կան քիմիական գիտությունների բնագավառում: Իհարկե, մենք չպետք է մոռանանք մի կարևորագույն հանգամանք, այն է՝ ստեղծել ամենատարրական պայմաններ աշխատանքի կազմակերպման համար: Հարկ չկա ապացուցելու, որ առանց էլեկտրականության անհնար է գիտություն ստեղծել: Ուստի հանրապետությունում գիտության զարգացման և դրանից բխող տնտեսության կատարելագործման ամենաառաջին պայմանը մեր գիտահետազոտական ինստիտուտները առաջնահերթ կարգով էլեկտրականությամբ ապահովելն է, և հանրապետության կառավարությունը պետք է որ այս հարցը անվերապահորեն լուծի:

Քիմիական գիտությունների պրոբլեմային խորհուրդը մեծ անելիքներ ունի հանրապետությունում քիմիական գիտության և քիմիական արդյունաբերության ինտեգրացման ուղղությամբ: Հենց այստեղ է, որ պետք է դրսևորվի ոչ միայն կիրառական և հիմնարար ուղղությունների ինտեգրացումը, այլ նաև կիրառական հետազոտական մտքի վերջնական նյութականացումը, այսինքն՝ արտադրության արգասիք դառնալը: Մեր խորին համոզմամբ, պետք է ստեղծել այնպիսի իրավիճակ, որ հիմնարար հետազոտությունները մտավոր սնունդ ապահովեն կիրառական ուսումնասիրությունների համար, իսկ կիրառականը՝ նյութական, հիմնարար հետազոտությունների զարգացման և կատարելագործման համար: Սա նոր հայտնագործություն չէ, իհարկե, այսպես են գործել և գործում աշխարհի շատ և շատ զարգացած երկրներում: Եվ այս առումով իրավական տեսակետից պետք է արմատապես վերանայվեն հեղինակային իրավունքի հարցերը՝ արտադրության մեջ ներդրված մշակումներից ֆինանսական լուրջ հատուցում ստանալու իմաստով: Այլ կերպ անհնար կլինի զարգացնել գիտություն-արտադրություն կապը:

Մենք շատ հարցերում բավական հաճախ ցանկանում ենք հասնել միջազգային ստանդարտների, առանց այդ ստանդարտները ծնող պայմանները ապահովելու, չնայած արդեն քանիցս համոզվել ենք, որ դա անհնար է: Մտավոր գործունեության արդյունքը, մանավանդ, երբ այն փոխակերպվում է ռեալ գիտական և գործնական հաջողության, պետք է որ շատ բարձր գնահատվի ոչ միայն խոսքով, այլև նյութապես, հակառակ պարագայում գիտության զարգացումը մեզ մոտ կկրի զուտ լոզունգային բնույթ և չի կատարի հասարակության առաջընթացի ապահովման ֆունկցիան կրելու իր կոչումը:

Այս առումով կարևոր է նաև մեր համակարգում կառավարման մեխանիզմների ոչ միայն կատարելագործումը, այլ առանձին դեպքերում նաև արմատական վերակառուցումը: Գիտահետազոտական ինստիտուտների գործունեության հիմքում նախորդող տարիներին ընկած է եղել ստանդարտ ինֆրակառուցվածք, անկախ նրանից, թե տվյալ ինստիտուտը ինչ պրոֆիլի է և նրա գործունեությունն ի՞նչ նպատակներ է հետապնդում: Եվ այսօր, երբ փոխվել են կյանքի պայմաններն ու պահանջները, մեր ավանդական գործունեությունը շատ հաճախ կանգ է առնում անհաղթահարելի պատնեշի առջև: Ահա թե ինչու մենք պետք է կազմակերպական նոր ուղիներ որոնենք՝ նոր պայմաններում գոյատևելու համար:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հերոսամարտի և հերոսների մասին



Մայիս՝ հաղթանակների ամիս

Մայիսը՝ գարնան ամենապայծառ, ծաղկաշատ ու արևոտ ամիսը, մեզ համար նաև հաղթանակների ամիս է: Ինչպես ամեն ձմռան տագնապներից ու տառապանքներից հետո մենք ազատ շունչ ենք քաշում մայիսի գալուն պես, այնպես էլ մեծ իմաստով մեր հոգին ու էությունը ձերբազատվում է կապանքներից ու հաղթարշավ է պարում՝ պատմականորեն: Ասես չկա այստեղ որևէ պատահականություն, ամեն ինչ շաղկապված է, ամեն ինչ բնական է:

Մայի՛ս... Համբարձման ամիս...

Մայի՛ս... Հաղթանակ Սարդարապատում...

Մայի՛ս... Հաղթանակ Ապարանում...

Մայի՛ս... Հաղթանակ Ղարաքիլիսայում...

Մայի՛ս... Շուշիի ազատագրումը...

Մայի՛ս... Հաղթանակ ֆաշիզմի դեմ...

Մայի՛ս... 1918 թ. Հայկական անկախ հանրապետության հռչակում...

Հերոսները չեն մեռնում: Ոչ միայն նրանց հոգիները, այլև նրանց կենդանի կերպարը, կյանքը, վարքագիծը, կատարածը հավերժ մնում են սերունդների հիշողության մեջ՝ որպես այդ սերնդի այսօրվա վարքագիծ, այսօրվա ապրելաձև:

Արդ, հրապարակված են երկու լուսանկար:

Առաջինն արված է 1902 թվականին, Օրդու ավանում (Արևմտյան Հայաստան): Օրդուն ուներ 6000 բնակիչ, որից 1700-ը՝ հայ: Ավանում գործում էր հայկական երկու վարժարան, որոնցից մեկում մանկավարժական գործունեություն էր ծավալում Արամ Մանուկյանը (կենտրոնում): Մանկավարժ, որ 1915-ին պետք է կազմակերպեր Վանի ինքնապաշտպանությունը, իսկ հետո, 1918-ի մայիսին դառնար Սարդարապատի հերոսամարտի ղեկավարներից մեկը:

Մյուս լուսանկարի հերոսը ազգությամբ հույն է, կապիտան Սակելլարիոսը՝ իր հրետանային մարտկոցի անձնակազմով: Լսելով ապարանցի պաշտպանների ծանր վիճակի մասին, նա Սարդարապատից շտապում է Արագածի լանջերը և հրանոթային անակնկալ կրակով սարսափ տարածում թուրք զավթիչների վրա: (Լուսանկարն արված է 1918 թվականին, մարտերի ժամանակ):

Նորից մայիսն է բացվում Հայոց լեռնաշխարհում՝ ալ կակաչների, վարդերի ամիսը: Այդ ծաղիկներն ասես ցողված հերոսների հիշատակին են: Ժողովուրդը պատմությանը պարգևեց հաղթանակների մայիս, բնությունը՝ շռայլ ծաղիկներով պատեց ընկածների հիշատակը:

Ողջո՛ւյն, հաղթանակի մայի՛ս...

ԱՊԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ

Արևմտյան ռազմաճակատում կրելով խոշոր պարտություններ, երիտթուրքերի իշխանությունը ձգտում էր կորցրած տարածքների փոխարեն նվաճել Անդրկովկասը: Ահա այս նպատակով էլ թուրքական զորքերի գլխավոր հրամանատարությունը վճռեց հարվածն ուղղել նախ Հայաստանի վրա, որի գրավումը հնարավորություն կտար հասնել Բաքու և անցնել Միջին Ասիա:

Այս ծրագրի իրագործումն անմիջապես ղեկավարում էր գեներալիսիմուսի կոչում ստացած Էնվեր փաշան, որը հաճախ էր արդեն խոսում այն մասին, որ իրենց պատիվ է վիճակված ստեղծել թուրքական մեծ պետություն, որի տարածքում «Կասպից ծովը նրա ներքին լիճն էր լինելու»:

Մինչև ատամները զինված թուրքական բանակները 1918 թվականի հունվարի 30-ին, խախտելով զինադադարը, անցան հարձակման: Օգտվելով ռազմաճակատում ստեղծված նպաստավոր պայմաններից, թուրքական զորքերը մտան Հայաստանի տարածք: Նրանց հաջողվեց 1918 թ. մարտի 15-ին գրավել Ալեքսանդրապոլը:

Ամեն ինչ կարծես թե ընթանում էր Էնվերի մշակած ծրագրով: Դեպի Արարատյան դաշտ ու Երևան ճանապարհն արդեն բաց էր: Բնակչությունը խուճապահար փախչում էր անկանոն նահանջող զինվորների խմբերի հետ: Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ առջևում այլևս դիմադրող ուժ չկա: Վեհիբ փաշան Էնվերի առաջադրանքով իր զորախմբերի հրամանատարներին հայտնում էր, որ դեպի Երևան շարժվելն իրենց համար հաճելի զբոսանք կլինի:

Էնվերի առաջադրանքով թուրքական զորքերը Ալեքսանդրապոլից շարժվեցին երկու ուղղությամբ: Նրանց մի մասը բռնեց Երևանի ուղղությունը, իսկ մյուսը՝ դեպի Ղարաքիլիսա: Մայիսի 19-ին թուրքական զորքերն առանց որևէ դժվարության գրավեցին Համամլուն (այժմ Սպիտակ): Ահա այստեղ էր, որ թուրքական 36-րդ դիվիզիայի հրամանատար Էսադ փաշան հրաման ստացավ փոխել շարժման ուղղությունը և Ապարանի վրայով անցնել Սարդարապատ, որտեղ էլ, թուրքական հրամանատարության համար միանգամայն անսպասելի, երևացել էին հայկական ուժեր: Այդ ուժերին հարկավոր էր հարվածել թիկունքից, և այս առումով էլ Էնվեր փաշան անչափ կարևորում էր Էսադի զորախմբի արագ առաջացումը:

Համամլուից թուրքական մի զորախումբ Ջավիդ բեյի հրամանատարությամբ ուղարկելով դեպի Ղարաքիլիսա, Էսադ փաշան, 2000 զինվորների գլուխն անցած, շարժվեց դեպի Ապարան: Էսադի զորախումբն ուներ չորս թնդանոթ, մեկ տասնյակից ավելի գնդացիր:

Էսադ փաշայի առջև խնդիր էր դրված սրընթաց գրոհով անցնել Ապարան—Աշտարակ խճուղով և դուրս գալ Սարդարապատի թիկունքը:

Հայկական զորամասերը հիմնականում կենտրոնացել էին Սարդարապատում, և այստեղ էլ պետք է տրվեր վճռական ճակատամարտը: Թուրքական հրամանատարությունը վստահ էր հաղթանակի համար, քանի որ, ըստ ծրագրի, Ապարանի կողմից առաջացող Էսադ փաշան Սարդարապատում գտնվող հայկական ուժերին հանկարծակի հարվածելու էր թիկունքից: Դա ոչ միայն խուճապ կառաջացներ հայկական զորամասերի շարքերում, այլև ընկնելով աքցանի մեջ՝ հայերը ստիպված կլինեին հանձնվել:

Թվում է այս ծրագիրը մշակված էր ամենայն բծախնդրությամբ, հաշվի էին առնված բոլոր հանգամանքները: Առաջին օրերի իրադարձությունները թուրքական հրամանատարության մեջ ավելի էր ուժեղացրել ինքնավստահությունը: Մանավանդ արդեն հայտնի էր դարձել, որ Սարդարապատում գտնվող հայկական ուժերը ոչ միայն բազմաթիվ են, այլև վատ զինված: Այնպես որ, առաջին իսկ գրոհը լուծելու էր ճակատամարտի ելքը:

Էսադ փաշան իր համար պարզել էր, որ Ապարան—Աշտարակ ճանապարհին կանոնավոր զորք չկա, և կարող է անարգել, առանց ժամանակ կորցնելու, դուրս գալ Սարդարապատի թիկունքը:

Մինչ այդ, թուրքական հիմնական ուժերը հասան Սարդարապատ և իրենց համար անսպասելի հանդիպեցին հայկական զորախմբերի կատաղի դիմադրությանը: Սկսվեց անհավասար ճակատամարտը թվով գերակշիռ թշնամու դեմ: Թուրքական զորքերին ոչ մի կերպ չէր հաջողվում ընկճել հայերի դիմադրությունը: Նրանց հրամանատարությունը հանկարծակի էր եկել: Եվ Էսադ փաշայի զորախմբի ներկայությունը դարձավ դրությունը փրկելու միակ հույսը:

Իսկ ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ Ապարանում, որտե՞ղ էր Էսադ փաշան:

Ալեքսանդրապոլի, հետո նաև Համամլուի գրավման լուրը մեծ արագությամբ հասավ Ապարան: Բնակչությունը տագնապի մեջ էր: Իմիջիայլոց ասենք, որ երկու տարի անընդմեջ տեղի ունեցած երաշտը ապարանցիներին հասցրել էր ահավոր թշվառության: Բավական է միայն մեկ տվյալ: 1917—1918 թթ. Ապարանի շրջանում ծնված 212 մարդու դիմաց մահացել էին 1285-ը: Ի՞նչ կարող էր անել թշվառ ու սովի մատնված բնակչությունը առաջացող թշնամու դեմն առնելու համար:

Անշուշտ, Էսադ փաշային հայտնի էր ապարանցիների վիճակը, և նա հույս ուներ, որ այստեղ էլ նրա առջև սպիտակ դրոշակ կպարզեն: Սակայն նա չարաչար սխալվում էր: Ապարանի բնակչությունը առաջացած խուճապից արագ ուշքի եկավ: Նրանց առաջին գործը եղավ կանանց ու երեխաներին ապահով վայր տեղափոխելը: Այդ վայրը Ապարանի վերջին գյուղից 12 կմ հեռավորության վրա գտնվող Իլանչալան էր (այժմ Աշտարակի շրջանի Արտաշավան գյուղ): Այո, կանանց ու երեխաներին գիտակցաբար հեռու չտարան, որ ոչ մեկը չմտածի նահանջի մասին: Երկու օրվա ընթացքում կանայք ու երեխաները տեղափոխվեցին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՆՍՊԱՌ, ՆԱԽԱՆՁԵԼԻ, ԵՌԱՆԴ

Ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանին

Մեծարգո Գևորգ Բագրատի.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության և անձամբ իմ անունից ջերմորեն ողջունում եմ Ձեզ՝ ծննդյան 75-ամյակի և գիտական, հասարակական, քաղաքական գործունեության 55-ամյակի առթիվ:

Դուք անցել եք գիտնականի, հասարակական ու պետական գործչի, Հայրենական մեծ պատերազմի մասնակցի հարուստ և բազմաբեղուն կյանքի մեծ ճանապարհ, որն ուսանելի է երիտասարդ սերնդի համար: Իբրև հայրենասեր, քաղաքացի, Դուք միշտ էլ նվիրված եք եղել հայ ժողովրդի վեհ իղձերի իրագործմանը:

Աշխատելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում, որպես պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, Դուք կատարել եք մեծ գիտակազմակերպական աշխատանք, ներկայացրել հասարակական գիտությունները միջազգային շատ գիտաժողովներում, զեկուցումներով հանդես եկել մի շարք երկրներում: Այժմ, ղեկավարելով ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը, Դուք այն դարձրել եք ճանաչված գիտական հիմնարկներից մեկը: Ձեր խմբագրությամբ և աջակցությամբ հրատարակվել են մոտ 60 գիրք և գիտավերլուծական բնույթի գրքույկ՝ հայագիտության, մշակույթի, պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, արվեստի, մանկավարժության, ժուռնալիստիկայի, հրատարակչական գործունեության, գրադարանային գործի ասպարեզում:

Դուք Երևանի պետական համալսարանի, Հր. Աճառյան և Մեծամորի «Արմավիր» համալսարանների պրոֆեսոր եք, պատմական գիտությունների դոկտոր: Ձեր գրչին են պատկանում մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմության և գրականության կարևորագույն պրոբլեմներին՝ «Հայաստանը և Ռուսաստանը», «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին», «Ուրվագծեր հայ-բուլղարական պատմության», «Ավարայրից մինչև Սարդարապատ», «Ժողովրդական հերոս Անդրանիկ», «Ավետիք Իսահակյան», «Հովհաննես Շիրազի հետ», «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առաջ», «Էջեր հայ ժողովրդի պատմությունից» և այլն: Դուք Հայաստանի գրողների և ժուռնալիստների միությունների անդամ եք, գրականագիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ:

Դուք պարգևատրվել եք մարտական և աշխատանքային բազմաթիվ շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով, ընտրվել Գյումրիի պատվավոր քաղաքացի: Ձեզ սիրում ու գնահատում են որպես վսեմ հոգու տեր, շրջապատի և ընկերների նկատմամբ սրտառուչ և ուշադիր վերաբերմունք ունեցող մարդու: Ձեզ և Ձեր գործունեությանը բնորոշ են խոր մտահորիզոն, գիտական ճշգրտության բարձր մակարդակ, գիտակազմակերպական տաղանդ, արդարամտություն և ճշմարտացիություն:

Սիրելի Գևորգ Բագրատի, թույլ տվեք մեկ անգամ ևս սրտանց շնորհավորել Ձեզ՝ հոբելյանի առթիվ, ցանկանալ քաջառողջություն, արևշատություն և նորանոր հաջողություններ Ձեր բազմաբեղուն և ազգանվեր գործունեության մեջ՝ ի փառս հայ ժողովրդի:

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ,
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԻՐԵԼԻ ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ: Այս նամակով ուզում եմ արտահայտել իմ ամենաանկեղծ համակրանքը Ձեր բազմամյա գիտական և հասարակական-հայրենասիրական գործունեության կապակցությամբ: Այժմ, երբ լրանում է Ձեր 75 տարին, ավելի պարզ է երևում, թե որքան համապատասխանում է Ձեր գործունեությունը մեր ժողովրդի և հայկական գիտության շահերին:

Ձեր մեծ եռանդը թույլ է տալիս Ձեզ ուղղել հասարակության ուշադրությունը դեպի գիտական, հասարակական, քաղաքական այն հարցերը, որոնք այսօր կարևոր են մեր ժողովրդի համար:

Որպես Հայաստանի ակադեմիայի գիտա-ինֆորմացիոն կենտրոնի ղեկավար, Ձեզ հաջողվում է ժամանակին տեսնել նորը և այդ նորի հետ կապված դրական և բացասական երևույթները ճիշտ գնահատել:

Ընդունեք իմ լավագույն ցանկությունները և բարեմաղթումները:

Ակադեմիկոս ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՐԳԵԼԻ ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ

«Նպատակ» թերթի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ ծննդյան 75-ամյակի առթիվ: Մենք, մեր թերթի հազարավոր ընթերցողներ ճանաչում ենք Ձեզ, որպես «Նպատակի» բարեկամի և եռանդուն թղթակցի: Ձեր հոդվածները հայ իրականության, հայ երևելիների մասին հետաքրքրությամբ են ընթերցվում, իրավամբ ունենալով պատմական մեծ արժեք:

Մաղթում ենք Ձեզ՝ շարունակել ապրել նույն ավյունով, գործունյա, եռանդուն սկզբունքներով մինչև 100 տարեկան և հատկապես՝ 100 տարուց հետո:

«ՆՊԱՏԱԿ»

ԱՊԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Միաժամանակ ընթանում էր ժողովրդական աշխարհազորի կազմակերպումը: Նրա մեջ մըտան զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդիկ՝ անկախ կուսակցական պատկանելությունից, ունեցվածքից ու դիրքից: Հայրենիքի վրա կախված վտանգը Ապարանի պաշտպանների շարքերն էր բերել անխտիր բոլորին: Աշխարհազորի կազմակերպումը ղեկավարում էր Չամբլու գյուղի բընակիչ Սեդրակ Ջալալյանը: Շուտով իր զինավառ խմբով Ապարան եկավ նաև նշանավոր Խենթի որդին՝ Արսեն [illegible]-Պետրոսյանը:

Մայիսի 20-ի երեկոյան Ապարանի բազիլիկայի մոտ հավաքվեցին աշխարհազորայինները: Նրանցից շատերը զենք չունեին: «Կտնենք թուրքերից»— կատակում էին երիտասարդները: Հուզիչ էր հավաքվածների երդումը: «Ո՛չ մի քայլ չնահանջել: Եթե մեռնելու ենք, ապա մեռնենք միայն մեր հողի վրա»:

Ոգևորող էր Սեդրակ Ջալալյանի ելույթը: «Եթե,— ասաց նա,— թուրքական զորքը մըտնի Արարատյան դաշտ ու գըրավի Երևանը, ապա վերջ հայ ժողովրդին: Երդվենք, որ թուրքերը Երևան կմտնեն միայն մեր դիակների վրայով»:

Երդում ընդունած աշխարհազորայինները դիրքեր գրավեցին Միրաք գյուղի մոտ, Քասախ գետի վրայի կամուրջին հարող բարձունքների վրա: Նրանց էին միացել եզդի կամավորները՝ Ջահանգիրի հրամանատարությամբ: Մայիսի 21-ի լուսաբացին երևաց թուրքական հետախուզախումբը: Ապարանի պաշտպանները հարմար դիրքեր էին գրավել և թշնամու համար աննկատ մնացին: Շուտով երևաց թուրքական առաջապահ ջոկատը: Թուրք հեծյալներն անհոգությամբ հասան կամուրջ: Հենց այդ ժամանակ էլ պաշտպանները կրակ բացեցին: Թշնամին հանկարծակիի եկավ: Զոհեր ու վիրավորներ տալով, անկանոն նահանջեց: Պաշտպանների ձեռքն ընկավ մի քանի հրացան:

Միրաքի կամրջի մոտ պատահածը անսպասելի էր Էսադ փաշայի համար: Նա վըստահ էր, որ իր դիմաց ոչ մի ուժ չկա: Ամբողջ օրը թուրքական զորամասն առաջ չըշարժվեց: Հետախուզությունը Էսադին զեկուցեց, որ առջևում կանոնավոր զորք չկա և կրակողները շրջակա գյուղերի բնակիչներն են ու զինված են միայն հրացաններով: Մայիսի 21-ի ուշ երեկոյան թուրքական զորախումբը մըթության քողի տակ ձեռնարկեց երկրորդ գրոհը: Ապարանի պաշտպաններն աներեր մնացին:

Մայիսի 22-ը բացվեց հորդ անձրևով: Անսպասելի արագությամբ Քասախը վարարեց, [illegible] պաշտպանների համար: Նրանք, թեև մեծ դժվարությամբ, կարողացան անցնել գետը և նոր դիրքեր գրավել Ապարանից հարավ բարձունքների վրա: Որոշ ժամանակ անց [illegible] թուրքական զորախումբը, և մարտը վերսկսվեց նոր ուժով: [illegible]

Սակայն Ապարանի պաշտպանների վիճակն էլ ծանր էր: Զգալի էր փամփուշտների պակասը, չկար նաև բավարար քանակությամբ հաց: [illegible] թիմման համար:

Մայիսի 23-ի գիշերը Ապարանի պաշտպանները հուսադրող լուր ստացան: Նրանց օգնության էր շտապում 6-րդ գունդը, որի զինվորները հիմնականում ապարանցիներ էին: Լուրը ոգևորեց պաշտպաններին: Հաջողությամբ հետ մըղվեց թշնամու մի գրոհ ևս:

Մայիսի 23-ի երեկոյան Էսադ փաշան մարտի մեջ մըտցրեց հրետանին: Արձակված արկերից վնասվեց Քասախի բազիլիկայի հյուսիս-արևմըտյան պատը: Քանդվեցին նաև մի քանի տներ: Ապարանի պաշտպաններն սպառում էին իրենց վերջին ուժերը: Ահա հենց այդ պահին էլ նրանց օգնության հասավ 6-րդ գընդում ծառայող ապարանցիներից կազմված երկու գումարտակ, որոնց հետ էր նաև պորուչիկ Ջեմլյակի պարտիզանական ջոկատը: Օգնության հասած զորախմբի ընդհանուր հրամանատարն էր Դրաստամատ Կանայանը՝ Դրոն:

Սա արդեն լուրջ օգնություն էր: Անօրինակ սխրանք գործեց Ջեմլյակը, ոչնչացնելով հակառակորդի 30 զինվոր և մեկ սպա: Նահանջող թշնամուն դիրքեր գրավելու հնարավորություն չտալու նպատակով հայկական ուժերը գըրավեցին Քորբուլաղ-Ղոնդախսազ-Մելիքգյուղ գիծը, հարկադրելով թուրքերին թողնել Ջանագիրմազ գյուղը:

Մայիսի 21—25-ը Ապարանի պաշտպանները կարողացան կանգնեցնել թշնամու գերակշռող ուժերին և փաստորեն Էսադ փաշային զրկեցին Սարդարապատի մոտ նրան անհամբեր սպասող թուրքական զորաբանակներին օգնելու հնարավորությունից: Ապարանցիների հաղթանակը ըզգալիորեն թեթևացրեց Սարդարապատի պաշտպանների վիճակը:

Մայիսի 25-ին Էսադ փաշան Համամլուից ստացավ օժանդակ ուժեր և վերսկսեց գրոհը: Ապարանի պաշտպանները հարկադրված նահանջեցին՝ տալով 10 սպանված և 35 վիրավոր: Թշնամու հաջողությունը պայմանավորված էր հրետանու առկայությամբ, ինչից զրկված էին Ապարանի պաշտպանները: Ստեղծված իրադրությունը հարկադրեց Դրոյին ետ քաշվել և դիրքեր գրավել Ապարանից 20 կմ հեռու գտնվող Ղազնաֆար (այժմ Արագած) գյուղի մատույցներից մինչև Ղարաքիլիսի (այժմ՝ Հարթավան) գյուղ: Այս ընթացքում Սարդարապատի պաշտպանների վիճակը այնքան էր ամրացել, որ գեներալ Սիլիկյանը հնարավորություն ունեցավ Ապարան ուղարկել 6-րդ գնդի մընացած մասը՝ գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ: Ապարան ուղարկվեց նաև կապիտան Սակելլարիսի հրետանային մարտկոցը: Այս ուժերը Ապարանի պաշտպաններին միացան մայիսի 27-ի երեկոյան:

Դիրքեր գրավելով Ապարան-Աշտարակ ճանապարհի վրա, Դրոն նպատակ ուներ Էսադ փաշայի [illegible] Օգտվելով անձրևային եղանակից, Էսադ փաշան հասավ Գյուլուջա: Ապարանի պաշտպանները ժամանակին տեղեկացան փաշայի մտադրության մասին: Մայիսի 28-ին տեղատարափ անձրևի տակ արագ հաղթահարելով 20 կմ տարածություն, Դրոն իր զորախումբը հասցրեց Գյուլուջա: Թուրքական զորախումբը դիրքեր էր գրավել Մուլքի-Գյուլուջա գյուղերի միջև ընկած բլուրների վրա: Էսադն ուներ 2000 զինվոր, 6 թնդանոթ և 12 գնդացիր: Նա ամեն կերպ ձգտում էր Ապարանի պաշտպաններին զրկել դիրքավորվելու հնարավորությունից: Ամբողջ օրը տեղատարափ անձրևի ուղեկցությամբ ընթանում էր մարտը: Գրոհներից մեկի ժամանակ էլ հերոսի մահով զոհվեց պորուչիկ Ջեմլյակը:

Հաջորդ օրը Խենթի որդին իր ջոկատով անսպասելի դուրս եկավ թշնամու թիկունքը: Էսադ փաշայի գլխին կախվեց գերի ընկնելու վտանգը: Շըրջապատվելուց խույս տալու համար փաշան սկսեց իր ուժերը անկանոն ետ տանել՝ տալով մեծ քանակությամբ զոհեր: Էսադ փաշան դիրքեր գրավեց Տանագիրմազ գյուղում: Այստեղից էլ փաշան վերսկսեց գրոհը Ապարան գյուղի ուղղությամբ: Բայց նըրա գրոհը խափանվեց Սակելյարիսի մարտկոցի դիպուկ կրակով:

1918 թ. հունիսի երկուսին Էսադ փաշան ստիպված էր իր դիվիզիայի մնացորդներով բռնել նահանջի ճանապարհը: Անկանոն նահանջող թշնամուն կրնկակոխ հետապնդում էին Ապարանի ոգևորված պաշտպանները: Նրանք ձըգտում էին դեպի Համամլու՝ նըպատակ ունենալով միանալ Ղարաքիլիսայի ճակատամարտում հաղթանակ տարած ուժերին և միասին շարժվել Անդրանիկի զորավարին ընդառաջ:

Խորն էր Ապարանի պաշտպանների հիասթափությունը, երբ հրաման ստացվեց դադարեցնել փախչող թշնամու հետապնդումը: Բաթումում արդեն կնքվել էր հաշտության պայմանագիր, որով Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերում տարած համաժողովրդական հաղթանակը մնաց անավարտ:

* * *

...Անցան տարիներ: Ապարանցին դարձավ իր հայրենի օջախի տերը: Կառուցեց ու շենացրեց իր հարազատ տունը: Բայց վրա հասավ 1941 թ. հունիսը: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայրենիքը նորից վտանգի մեջ էր: Հայ ժողովրդի տասնյակ հազարավոր որդիներ մեկնեցին ռազմաճակատ: Ռազմաճակատ մեկնեցին նաև հազարավոր ապարանցիներ, որոնց մեջ էին նաև 1918 թ. Ապարանի հերոսամարտի շատ մասնակիցներ: Իրենց հայրերի ու ավագ եղբայրների հետ կողքկողքի ֆաշիստական զավթիչների հետ մարտնչում էին նաև ապարանցի երիտասարդները: Նրանցից մեկն էլ Լուսագյուղի խիզախ զինվոր Բեգլար Վասիլյանն էր, որը Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի կազմում մասնակցեց Բեռլինի գրավման համար մղված մարտերին և Ռայխստագի պատին թողեց «Ապարան—Բեռլին» հաղթական մակագրությունը:

Ապարանի բնակչությունը սիրով ու երախտագիտությամբ է հիշում հայրենի հողի համար մարտնչած իր զավակներին: Բոլոր գյուղերում վեր են խոյանում Հայրենական մեծ պատերազմում զոհվածների սըխրանքն ու հիշատակը հավերժացնող հուշարձաններ: Իսկ Ապարանից քիչ հյուսիս, այն բլուրների վրա, որտեղ Ապարանի հերոս պաշտպանները 1918 թ. գարնանը կանգնեցրին թուրքական զավթիչների առաջխաղացումը, վեր է խոյանում ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի հանճարով ստեղծված հուշակոթողը՝ հավերժին տանելով հայրենիքի համար զոհված բոլոր ապարանցիների չխամրող փառքը:

Ապարանում աճում է նոր սերունդ, հայրենի տունը շեն պահող երիտասարդությունը: Նրանցից շատերը, հավատարիմ իրենց հայրերի պատգամին, միավորվեցին Ապարանի վաշտի մեջ ու իրենց քաջարի հրամանատար Նահապետ Տոնոյանի հրամանատարությամբ շտապեցին հարազատ Ղարաբաղին օգնության: Հարյուրավոր երիտասարդ ապարանցի ազատամարտիկներ աչքի ընկան անօրինակ սըխրանքներով:

Հուսով եմ. կգա ժամանակը և մենք ապագա սերունդներին կհանձնենք Ապարանի նոր օրերի երիտասարդության գործած քաջագործությունների տարեգրությունը: Ժողովրդի հերոսապատումը սպիտակ էջեր չպետք է ունենա:

Վլադիմիր ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գիտական մտքի գնահատման չափանիշը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այսպիսով, խոսքը գնում է ոչ միայն գիտական մշակումների արդյունավետության և մրցունակության բարձրացման, այլ նաև կառուցվածքային առումով հետազոտական կենտրոնների կատարելագործման մասին, այն հաշվով, որ դրանք կենսունակ դառնան ըստեղծված տնտեսական և սոցիալական նոր հարաբերությունների պայմաններում: Այս առումով հետաքրքիր պետք է համարել բնական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությունը, այն է՝ ուսումնասիրել Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտին գիտաարտադրական ֆիրմայի կարգավիճակ տալու հարցը, այն հաշվով, որ ակցիաների վերահսկման իրավունքը գտնվի ակադեմիայի ձեռքում, իսկ կոլեկտիվի անդամների շահագրգռվածությունը գիտական մտքի վերջնական արդյունքում խիստ բարձրանա: Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը գործունեության իր բընույթով լիովին համապատասխանում է նման վերակառուցման անհրաժեշտությանը, եթե նկատի ունենանք նման բնույթի այլ կենտրոնների միջազգային փորձը:

Բացի այդ, այս նոր կարգավիճակը լայն հնարավորություններ կստեղծի արտասահմանյան ինվեստորների ընդգրկման համար, քանի որ, ինչպես հայտնի է, պետական կառույցների հետ նրանք խուսափում են որևէ նյութական համագործակցության մեջ մըտնել:

Անհրաժեշտ փորձ կուտակելուց հետո, կարելի է աստիճանաբար կառուցվածքային այս վերափոխումը տարածել նաև այն ինստիտուտների վրա, որոնք գործունեության իրենց բնույթով համատեղելի կլինեն այդ վերակառուցմանը: Մյուս կողմից, մեզ չի կարող չմտահոգել այն հանգամանքը, որ քիմիայի բնագավառում իրականացված մի շարք գիտական մշակումներ, որոնք պատրաստ են կիրառական տեսակետից կյանք մտնելու, և զգալի տնտեսական օգուտ տալու հանրապետությանը, չեն գտնում իրենց իրականացման ուղիները: Այսպես, օրինակ, ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից մշակվել և պատրաստ է ներդրման գերմաքուր սիլիցիումի երկօքսիդի ստացման տեխնոլոգիան բնական հանքատեսակներից, սեղմման-ոլորման և առաձգական ալիքի երևույթի հայտնագործման հիման վրա մետաղների երեսպատման աշխատանքը, քիմիական ֆիզիկայի ինստիտուտում մշակված է բնական հանքատեսակներից գունավոր մետաղների հեռացման եղանակը և այլն, որոնց ներդրումը մեծ նշանակություն կարող է ունենալ հանրապետության տնտեսության զարգացման համար: Այս հարցում ավելի գործուն պետք է լինի էկոնոմիկայի նախարարության աջակցությունը:

Միաժամանակ, իրատեսորեն գնահատելով ստեղծված իրավիճակը, ակադեմիան պետք է իր ինստիտուտների հետ համատեղ ակտիվ աշխատանքներ տանի այդ մշակումների իրականացման համար անհրաժեշտ համագործակիցներ գտնելու ուղղությամբ՝ նըկատի ունենալով առաջին հերթին նախկին գիտատնտեսական կապերի վերականգնման հնարավորությունները, հատկապես Ռուսաստանի Դաշնության համապատասխան կառույցների հետ:

Մեր կարծիքով, այդ կապերի վերականգնման և արդյունավետ գործարկման կարևոր օղակ կարող է հանդիսանալ մի շարք ինստիտուտների գըծով մշտական ներկայացուցիչներ ունենալը Մոսկվայում, որոնք կարող են ակտիվ կերպով անհրաժեշտ որոնողական աշխատանքներ ապահովել մեր տեսական և կիրառական մշակումների համար անհրաժեշտ շուկա գտնելու ուղղությամբ: Հակառակ պարագայում այդ մշակումներից շատշատերը կմնան արխիվներում, քանի որ ինչպես գիտական և տնտեսական կապերի նախկին մեխանիզմները, այնպես էլ այսպես կոչված գլխային ինստիտուտների համակարգը այլևս չեն գործում: Շուկայական օրենքներով ապրող բոլոր երկրներում այս մոտեցման արդյունավետությունը վաղուց է հաստատված և եթե մենք պետք է ապրենք այդ օրենքներով, ուրեմն պետք է օգտվենք նաև այդ օրենքների հզոր լծակներից:

Վերջերս ակադեմիայի նախագահությունը հաստատեց քիմիական գիտությունների պըրոբլեմային գիտական խորհըրդի կողմից մշակված քիմիական գիտությունների զարգացման հիմնական ուղղությունները հանրապետությունում: Արդեն հաստատվել են նաև ընդհանուր և կիրառական կենսաբանության բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները: Եվ անհրաժեշտ է, որ թեմատիկ ֆինանսավորման հարցերը քննարկելիս, փորձագիտական հանձնաժողովները գործեն այս ելակետից: Մենք այնքան հարուստ չենք այսօր, որպեսզի գիտական թեմաների ընտրության հարցում գործենք «ով ինչ ուզում է թող հետազոտի» սկզբունքով:

Մենք մեծ սպասելիքներ ունենք ընդհանուր և կիրառական կենսաբանության և բըժշկակենսաբանական պրոբլեմային խորհուրդների և նրանց գիտահետազոտական ինստիտուտների գործունեությունից: Առաջնահերթ խնդիր պետք է համարել հանրապետության էկոլոգիական հավասարակշռությանը հասցրած կործանարար հարվածի՝ զանգվածային ծառահատման հետեվանքների արագ վերացման ուղղությամբ տարվող գիտական ուսումնասիրությունների խթանման անհրաժեշտությունը: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել արագ աճող ծառերի և խոտաբույսերի բազմացման հարցերը մեր հանրապետությունում, ծավալել այնպիսի հետազոտություններ, որոնք ուղղված լինեն էներգատար բույսերի գենետիկական կատարելագործման նըպատակին, մեր պայմաններում առավել բարձր արդյունավետությամբ բազմացող սորտեր ստանալու գործընթացն ապահովելու համար: Դա խիստ կարևոր է ոչ միայն էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու, այլև ոչ ավանդական եղանակով էլեկտրաէներգիա ստանալու առումով: Բացի այդ, էներգատար մշակաբույսերի ճիշտ ընտրությունը կըբարելավի ստորգետնյա ջրերի որակը Արարատյան հարթավայրում:

Մեծ կարևորություն են ներկայացնում նաև հանրապետությունում իրականացվող ընդհանուր և կիրառական մանրէաբանական և կենսատեխնոլոգիական հետազոտությունները: Սակայն անհրաժեշտ է, որ այդ մշակումները դրվեն իրական հողի վրա՝ արտադրության կազմակերպման առումով, կամ որպես նորագույն տեխնոլոգիական լուծումներ՝ անհրաժեշտ շուկա գտնեն դրսում: Դա լուրջ ֆինանսական ներարկումների հնարավորություն կտա և կապահովի ինստիտուտի հետագա զարգացումը և գիտաշխատողների նյութական իրավիճակի բարելավումը: Իհարկե, այս առումով մանրէաբանության ինստիտուտը, համեմատած մյուս ինստիտուտների հետ, ունի որոշ հաջողություններ, սակայն դրանք բավարար համարել չի կարելի: Նույն վիճակում են կենդանաբանության, հիդրոպոնիկայի, նուրբ օրգանական քիմիայի, կենսաքիմիայի ինստիտուտները, որոնց կիրառական մշակումները ոչ մի կերպ կյանք չեն մտնում: Այժմ մենք ունենք բոլոր հնարավորությունները՝ մեր տեսական ընդհանրացումների հիման վրա կատարված կիրառական բնույթի մշակումները (որոնց մասին տարիներ շարունակ գրում ենք մեր հաշվետվություններում) ներկայացնելու վերջապես այնպիսի գիտաարտադրական ատյանների, որոնք ի վիճակի են նախ ճիշտ գնահատելու այդ մշակումների իրական արժեքը և ապա ապահովելու դրանց ծնունդը, եթե իրոք այդ մշակումները լուրջ հետաքըրքրություն են ներկայացնում կյանքի համար: Մեր գիտնականները հաճախ են լինում արտասահմանյան գործուղումների մեջ, ոչ հազվադեպ՝ նաև ամիսներով, և հարկ է, որ նըրանք, իրենց կարծիքով մեծ հետաքրքրություն ներկայացնող, հատկապես կիրառական մշակումների համար, կյանք մտնելու ճանապարհ հարթեն իրենց արտասահմանյան հանրաճանաչ գործընկերների օգնությամբ: Եթե մենք այս ուղղությամբ չձեռնարկենք ակտիվ որոնողական աշխատանքներ, մեր փոխարեն դա ոչ մեկը չի անի, և այդ մշակումները այդպես էլ կյանք չեն մտնի: Խոսքը վերաբերում է նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի կողմից սինթեզված մի շարք ֆիզիոլոգիական ակտիվ նյութերին, կենսաքիմիայի ինստիտուտի կողմից անջատված մի շարք անոթակարգավորիչ միացություններին և այլն:

Իհարկե, մենք չենք կարող դրականորեն չգնահատել այն գիտահետազոտական ինստիտուտների գործունեությունը, որոնց կոլեկտիվների կատարած աշխատանքը արժանանում է միջազգային տարբեր հիմնադրամների դրամաշնորհների: Սա արդեն գիտական արդյունավետ և բարձր մակարդակով գործելու լավագույն չափանիշներից մեկը կարելի է համարել, եթե ոչ՝ ամենալավագույնը: Այսպես, Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում միջազգային դրամաշնորհներով կատարվում է չորս համատեղ գիտահետազոտական աշխատանք, մանրէաբանության ինստիտուտում՝ հինգ աշխատանք, իսկ երկու աշխատանք ներկայացված է մըրցույթի, կենդանաբանության ինստիտուտում՝ չորս աշխատանք, ֆիզիոլոգիայի ինստիտուտում՝ չորս աշխատանք, կենսաքիմիայի ինստիտուտում՝ մեկ աշխատանք, քիմիական ֆիզիկայի ինստիտուտում՝ երկու աշխատանք, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում՝ մեկ աշխատանք, բուսաբանության ինստիտուտում՝ երկու աշխատանք, օրգանական քիմիայի ինստիտուտում՝ մեկ աշխատանք, ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում՝ մեկ աշխատանք:

Իհարկե, միաժամանակ անհրաժեշտ է հրավիրել գիտական այն կոլեկտիվների ուշադրությունը, որոնց աշխատանքներից և ոչ մեկը չի արժանացել որևէ դրամաշնորհի: Սա պետք է մտածելու առիթ տա այդ ինստիտուտների կոլեկտիվներին՝ գիտական թեմաների ճիշտ ընտրության առումով:

Բոլոր պարագաներում մեր կյանքի այսօրվա պայմանները թելադրում են առավել նպատակային և մրցունակ գիտական թեմաների ընտրության անհրաժեշտությունը: Շատ դեպքերում կատարվող թեմաները խիստ կտրված են կյանքից, և հիմնարար գիտության առումով նույնպես՝ հետաքրքրություն չներկայացնող: Նման եզրակացությունը բխում է այն իրողությունից, որ տարբեր հիմնադրամների մըրցույթներին ներկայացված տեսական բնույթի շատ աշխատանքներ այդպես էլ մնացին առանց որևէ արձագանքի:

Իհարկե, սա բացարձակ չափանիշ համարել չի կարելի, սակայն ինչ-որ մի բան արդեն նշանակում է: Մենք պետք է ընդունենք մի իրողություն՝ որ գիտական մտքի արգասիքը պետք է ուղղված լինի մարդկության առջև ծառացած ինչ-որ մի խնդրի լուծմանը: Եվ այդ դեպքում այն միշտ կգնահատվի:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ակադեմիայի հրատարակչությունը հրատարակել է Սրբուհի Հայրապետյանի «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն» մեծածավալ հատորը, որն ընդգրկում է մեր գրականության պատմության առաջին 14 հարյուրամյակները և հասցեագրված է առաջին հերթին ուսանողությանը: Այս գիրքն ուշագրավ է մի քանի հատկանիշներով: Հին և միջնադարյան գրականության խնդիրները միշտ գտնվել են հայ գրականագիտության ուշադրության կենտրոնում: Երևանում, ինչպես նաև սփյուռքի տարբեր կենտրոններում հրապարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված հայ հին և միջնադարյան գրականության տարբեր խնդիրներին: Բայց այդ գրականության ամբողջական պատմություններն այսօր դեռ չունենք: Չունենք նաև բուհական որևէ ձեռնարկ, որն ընդգրկեր հին և միջնադարյան շրջանն ամբողջությամբ: Ս. Հայրապետյանն իր աշխատության առաջին էջերում տալիս է հայ հին գրականության պատմության զարգացման համառոտ ակնարկը, հիշելով և արժանին մատուցելով այն բոլոր հեղինակներին, որոնք աշխատել են այս ուղղությամբ: Հարգանքով հիշատակում է մեծ երախտավոր Մանուկ Աբեղյանի երկհատոր աշխատությունը, որը, դժբախտաբար, անավարտ է մնացել: Մ. Մկրյանի աշխատությունը հասնում է մինչև 10-րդ դար:

Բայց խնդիրը միայն եղած պատմությունների ժամանակագրական ընդգրկումը չէ: Աբեղյանի աշխատության ստեղծումից հետո ասպարեզ են եկել մեծ թվով նոր ուսումնասիրություններ, որոնց արդյունքներն այսօր հաշվի չառնել չի կարելի: Մյուս կողմից, ուսումնական ձեռնարկն ունի իր առանձնահատկությունները. այն չպետք է ծանրաբեռնվի բանասիրական մանրամասնություններով: Ահա այդպիսի ձեռնարկ ստեղծելու համար տիկին Հայրապետյանը հարկադրված է եղել կատարելու հսկայական աշխատանք՝ քրքրելու հայ հին և միջնադարյան գրականության մասին ստեղծված հարուստ գրականությունը և այդ ամենի հիման վրա, ելնելով հայ գրականագիտության ժամանակակից մակարդակից, շարադրելու իր ձեռնարկը:

Հեղինակի մոտեցումը լավագույնս, կարծում եմ, ձևակերպված է առաջաբանի հետևյալ տողերում. Նա ստեղծել է «ձեռնարկ, որ ուրվագիծ ծառայի ուսանողությանը՝ կամ ուղեցույց հետազոտողին և կամ, ընդհանրապես, առարկայով հետաքրքրված ընթերցողին՝ արագ, բայց ոչ մակերեսային մոտեցումով, բավարարելու իր հետաքրքրությունները հայ հին և միջնադարյան գրականության մասին»: Եվ ուրեմն. 400 տարվա նյութը պետք է ամփոփել մի հատորում և դեռ մտահոգվել, որ մոտեցումը մակերեսային չլինի: Խնդիր, որ ամբողջությամբ լուծվել չի էլ կարող. մակերեսայնությունն անխուսափելիորեն տարբեր առիթներով պետք է երևան գա: Անհնար է խոսել գրեթե յոթ տասնյակի հասնող հեղինակների մասին (որոնցից ամեն մեկը եղել է ու մնում է մի քանի, երբեմն տասնյակ ուսումնասիրությունների առարկա) ամեն մեկին հատկացված սուղ էջերի սահմաններում ու հեշտությամբ խուսափել մակերեսայնությունից: Բայց իր ամբողջության մեջ այս հատորը մնում է, գոնե մինչև այսօր, անփոխարինելի մի ուղեցույց բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ գրականության պատմությամբ:

Գրքի կառուցվածքը միանգամայն համապատասխանում է ուսումնական ձեռնարկին ներկայացվող պահանջներին: Այն սկըսվում է հայ ժողովրդի ու հայոց լեզվի առաջացմանը նըվիրված համառոտ մի ակնարկով, որտեղ ներկայացվում են ժամանակակից գիտության տեսակետներն այդ կարևորագույն խնդիրների մասին: Այնուհետև ներկայացվում է մեր հին բանահյուսությունը, որից հետո տրվում է ժամանակաշրջանի շատ թե քիչ աչքի ընկած հեղինակների ստեղծագործության բնութագիրը երեք բաժիններում՝ հին շրջան, միջնադար և վերանորոգման գրականություն: Եզրափակումից հետո ընթերցողը գտնում է մի բավական հարուստ «Մատենագիտություն», որտեղ ըստ գլուխների տրվում է օգտագործված և հանձնարարվող գրականության ցանկը. այն զբաղեցնում է երեսուն էջ և ընթերցողի ուշադրությունը հրավիրում տարբեր լեզուներով ստեղծված ուսումնասիրությունների վրա, որոնք կարող են օգնել խորանալու տվյալ խնդրի մեջ: Չի մոռացված և անվանացանկը: Եթե սրան ավելացնենք տողատակի հանգամանալից ծանոթագրություններն ու հղումները, իրավունք կունենանք խոսելու այս գրքի հարուստ գիտական ապարատի մասին:

Մենք նպատակ չունենք այստեղ մանրամասն քննության ենթարկել տիկին Հայրապետյանի հատորը: Դա շատ ավելի մեծ ժամանակ և տեղ է պահանջում (և պիտի հուսալ, այդպիսի քննություն դեռ կլինի): Ներկա գրության նպատակը շատ ավելի համեստ է՝ գիտական հասարակության և ուսանողության ուշադրությունը հրավիրել այս ըստ ամենայնի արժեքավոր աշխատության վրա: Այդ նույն նպատակով շատ համառոտ շարադրանքի մի քանի առանձնահատկությունների մասին: Հայ գրականագիտության լավ ավանդույթներին համապատասխան՝ գրական իրողությունները ներկայացվում են ժողովըրդի քաղաքական և սոցիալական պատմության իրադարձությունների ֆոնին: Բանասիրական անհրաժեշտ մանրամասնությունները հիմնականում ներկայացնելով տողատակի ծանոթագրություններում, Ս. Հայրապետյանը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է գրական երկերի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկություններին: Ճիշտ և ճաշակով ընտրված հատվածները համոզիչ են դարձնում տրված գնահատականները: Կարծում եմ, տիկին Հայրապետյանը ճիշտ է վարվել, գրաբարով գրված գործերի հատվածները ներկայացնելով նաև աշխարհաբար թարգմանությամբ: Այս ձևը օգտակար է ոչ միայն գրական երկերը լավ հասկանալու, այլև գրաբարի նրբությունների մեջ խորանալու համար:

5—18-րդ դարերի գրականության պատմության շըրջանաբաժանումը հենվում է հայ միջնադարագիտության ավանդների վրա: Նշենք, որ հեղինակը կողմնակից է հայ վերածննդի տեսության և միջնադարյան մի շարք գըրական իրողություններ ներկայացնում է այդ տեսանկյունից:

Եվ վերջապես, որ նման աշխատության համար շատ կարևոր է, այն շարադրըված է թեթև ու կանոնավոր արևմտահայերենով:

Կուզենայի երկու խոսք ասել հեղինակի մասին, որն իմ գործընկերն է եղել գրականության ինստիտուտում: Մոտ երկու տասնամյակ առաջ հանգամանքների բերումով նա տեղափոխվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Բայց, ի տարբերություն շատերի, չհրաժարվեց իր մասնագիտությունից, ամերիկյան սփյուռքում պրոպագանդելով ժամանակակից հայ գրականությունն ու հայ գրականության նվաճումները: Գրականություն է դասավանդել Լոս Անջելեսի համալսարանում, ամենաակտիվ մասնակցությունն ունեցել ամերիկյան հայ համայնքի մշակութային ձեռնարկումներին, մասնավորապես՝ սփյուռքի դպրոցների համար դասագրքերի ստեղծմանը: Ներկա գիրքը գրված է Լոս Անջելեսի համալսարանի հայագիտության ամբիոնի հանձնարարությամբ, իբրև ձեռնարկ սփյուռքի ուսանողության համար: Բայց աշխատության հրապարակումը Հայրենիքում (մինչև այդ այն արտասահմանում ունեցել է երկու հրատարակություն՝ Լոս Անջելեսում և Բեյրութում) ցույց տվեց, որ այն միանգամայն համապատասխանում է նաև հայրենական բարձրագույն դպրոցի պահանջներին: Երևանի և մյուս քաղաքների բանասեր ուսանողները գրքի հանդեպ մեծ հետաքրքրություն են հանդես բերում:

Մասնագետի աչքը այս աշխատության մեջ շտկելիք բաներ շատ կգտնի անշուշտ: Հաշվի առնելով այն հանգամանքները, որոնց մասին խոսվեց վերևում, այդ միանգամայն բնական է: Բայց, կարծում ենք, այս գրքին վիճակված է դեռ երկար տարիներ լինելու ուսանողության հուսալի ուղեցույց հայ հին և միջնադարյան գրականության անափ ծովում:

Ազատ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Սարդարապատի հուշահամալիրը...

«Օրենք արհմիությունների մասին», որը դեռ չկա

«Հայաստանում սոցիալական երկխոսության զարգացման համար»։ Այսպես է կոչվում այն ծրագիրը, որի իրականացման համար աշխատում են տեղացի և Ֆրանսիայի փորձագետները։

«Նպատակ» թերթն իր ընթերցողներին հանգամանորեն տեղեկացրել է այդ ծրագրի մասին, որի նպատակն է սոցիալական մեծ երկխոսություն սկսել ոչ միայն օժանդակելու շատ ծանր վիճակում հայտնված մարդկանց և սոցիալական տարբեր խավերի, այլև նրանց դարձնել այդ ծրագրի իրագործման ակտիվ մասնակից։

Սոցիալական երկխոսության կարևոր և հիմնական մասնակիցներից մեկը, անշուշտ, պետք է լինեն արհմիությունները։ Որքանո՞վ են նրանք պատրաստ այդ «երկխոսությանը», որպես արհմիություն ինչպե՞ս են կատարում իրենց խնդիրները— ահա այս հարցերին է անդրադառնում մեր զրույցը ՀՀ բուհերի աշխատողների և ուսանողների արհեստակցական կազմակերպությունների միության հանրապետական խորհրդի նախագահ ԳԱՌՆԻԿ ՎԱՂԱՐՇԱԿՅԱՆԻ հետ։

— Պարոն Վաղարշակյան, ակադեմիական և բուհական արհմիություններն այսօր գործում են իրարից անջատ: Սա գոնե անհասկանալի է թեկուզ այն առումով, որ ակադեմիայի համակարգի գիտնականների մեծ մասն աշխատում է բուհերում, այսինքն՝ այդ նույն անձնավորությունը նաև բուհի դասախոս է: Այլ խոսքով՝ պարզապես պարտադիր անհրաժեշտություն է ակադեմիական գիտնականների (և նրանց արհմիության) ու ձեր միության ու նրա անդամների համագործակցությունը:

— Նախ ասեմ, որ միանգամայն համամիտ եմ հարցադրման հետ, որովհետև մի ժամանակ դրանք ընդգրկված էին նույն միության կազմում։ 1991 թվականի մարտին մեր միության անդամներն իրենց հիմնադիր համագումարում կազմակերպեցին բուհական կրթահամակարգի աշխատողների և ուսանողների արհմիություն։ Այլ խոսքով, մենք անջատվեցինք լուսավորության աշխատողների արհմիությունից, որտեղ դեռ շարունակում են մնալ ակադեմիական համակարգի գիտնականները։ Անկեղծ ասած, տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ այնպիսի ծանրակշիռ և հեղինակավոր համակարգ, ինչպիսին ակադեմիան է, իր բազմաթիվ ինստիտուտներով, գիտնականների սոցիալական շահերի պաշտպանությունը մինչև օրս տեսնում է արհմիութենական մսուր-մանկապարտեզ-դպրոց փակ օղակի ներսում։ Երևի թե ես մտնում եմ ինձ չվերաբերող ոլորտ, սակայն քանի որ հարցը կա, այն կարծիքին եմ, որ Հայաստանի գիտնականների ստվար բանակի շահերի պաշտպանությունը պետք է դիտարկվի եթե ոչ մեր համակարգի հետ, ապա գոնե առանձին արհմիութենական կարգավիճակով։

— Խորհրդային ժամանակներում արհմիություններին օրենսդիր և գործադիր մարմիններում ի վերուստ տրված էր համամասնական իրավունքներ՝ իրականացնելու որոշակի սոցիալական խնդիրներ: Իրողություն է նաև, որ աշխատավորական խավերում արհմիությունները հաճախ դիտվում էին իբրև կուսակցության կցորդ: Եվ, այնուամենայնիվ, արհմիություններն անցյալում հավանաբար եղել են առնվազն հինգերորդ իշխանությունը: Իսկ ինչպիսի՞ն է վիճակն այսօր, և թեկուզ ձևականորեն, արհմիություններն ունե՞ն որևէ իրավունք կամ կարգավիճակ, իրականացնո՞ւմ են որևէ խնդիր կամ առաքելություն:

— Պարտադրված շուկայական հարաբերությունների անցումային արդի փուլում արհմիությունները փորձում են ճշգրտել իրենց տեղը օրենսդրական դաշտում և գործնականում՝ սոցիալական պայքարում։ Արհմիություններն այսօր գործում են առանց հստակ ռազմավարության, փորձելով առօրյա մարտավարական քայլերով պաշտպանել մասսայական կազմակերպությանը՝ 1,5 միլիոնանոց բանակին անդամագրված աշխատավորների սոցիալական շահերը։ Խոսելով իրավական դաշտի մասին, արժեր հիշատակել, որ «Արհմիությունների մասին» օրենքի բացակայությունը դժվարացնում է արհմիութենական շինարարության աշխատանքները։

Իրավական պետության կերտման ճանապարհին օրենսդրական դաշտի ամրությունը հարմարեցվում է տնտեսավարման ներկա ձևին, ավելի ստույգ՝ նրա դիմակայությանը։

Սեփականության ձևերի բազմազանությունը պարտադրում է, որպեսզի առանձնակի մոտեցում հանդես բերվի հենց օրենքների մշակման ներկա փուլում։ Իրոք, օրենքը չկա, ավելի ճիշտ խորհրդարանը իր պատգամավորներով ի զորու չեղավ անցած ժամանակաշրջանում ընդունել աշխատավոր մարդու շահերը պաշտպանող օրենք։ Ահա այս պարագայում հանրապետության նախագահը 1993 թ. հունվարի 25-ի իր հրամանագրով ամրակայեց արհմիությունների գործողությունները շուկայական հարաբերությունների ներկա փուլում։

— Պարոն Վաղարշակյան, եկեք ավելի կոնկրետ խոսենք ձեր համակարգի հիմնահարցերի և ընդհանրապես արհմիության խնդիրների մասին:

— Համակարգում կուտակված հիմնահարցերն այնքան շատ են, որ դժվար է մեկ հարցազրույցում անդրադառնալ բոլորին, սակայն կան կենսական կարևորության խնդիրներ, որոնք անտեսել չենք կարող։ Կցանկանայի դարձյալ անդրադառնալ իրավական դաշտի կերտմանը, քանզի քաղաքակիրթ պետություն կառուցելու հիմքն օրենքն է, որից վեր չպետք է կանգնի ոչ մի անհատականություն։ Կրթահամակարգի հիմնահարցերի լուծման բանալին գտնվում է խորհրդարանում, քանզի առանց «Կրթության մասին» օրենքի ընդունման, հնարավոր չէ կառուցել պետություն՝ գալիք օրով։ Այդ օրենքը չընդունելը թույլ է տալիս, որպեսզի ամեն մի գործադիր իր պատկերացման մակարդակով թույլատրի գործել այս կամ այն կրթօջախը, և որ ամենից կարևորն է, չունենալ կրթահամակարգի ռազմավարության ծրագիր, այլ լոկ կցկտուր մարտավարական քայլերով տնօրինել մեր բոլորի վաղվա օրը։ Չունենալով կրթահամակարգի ռազմավարության կուռ ծրագիր, դժվար է արհմիության խնդիրները դասակարգել։ Սակայն մի բան պարզից էլ պարզ է, որ քաղաքակիրթ երկրներից ոչ մեկում վաստակաշատ գիտնականի աշխատանքը չի վարձատրվում 4 դոլլարի համարժեքով։ Սա արդեն մտահոգիչ է և եթե կուզեք իմանալ՝ չարիքների արմատը։ Գիտական ներուժի մեծ արտահոսքը, բուհական կյանքում մեծ թափ առնող նեգատիվ երևույթները չլուծվող հիմնահարցերի հետևանք են միայն։

— Ի՞նչ է արվել ձեր կողմից կամ ընդհանրապես ձեր կարծիքով ի՞նչ պետք է անել սոցիալական պայքարի ոգին մարտունակ պահելու համար:

— Ցանկացած սոցիալական խնդիր ի վերջո լուծվում է մարդկանց ջանքերով, ասել կուզի՝ անհատների դերը միշտ էլ եղել է և մնում է անկախ քաղաքական, տնտեսական կացությունից և ժամանակից։ Ահա այս առումով մեր միության հանրապետական խորհուրդը կարևորել է պետական այրերի և պատգամավորների պատասխանատվությունը և դերը ցանկացած հիմնահարցի լուծման ժամանակ։

Դեռ 1992 թ. բաց նամակ է հղվել պետական նախարար Գր. Արեշյանին, որի համակարգում էին հոգևոր ոլորտի և կրթահամակարգի աշխատանքները։ Մեղմ ասած, նրա ուշադրությունը հրավիրվել է այն բանի վրա, որ կրթահամակարգում գործերի վիճակն անհանգստացնող է, տագնապալի, իսկ պետնախարարը՝ անտարբեր դիտող։ Ժամանակին նման մոտեցում է հանդես բերվել նաև բարձրագույն կրթության և գիտության առաջին փոխնախարար Ֆր. Մելիք-Ադամյանի գործելակերպի գնահատման հարցում։ Վերջերս բաց նամակ է հասցեագրվել ԳԽ կրթության և գիտության, լեզվի և մշակույթի հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Ղազարյանին և մշտական հանձնաժողովի անդամներին։ Նրանց ուշադրությունը հրավիրվել է այն բանի վրա, որ ներկա խորհրդարանն իր աշխատանքները շուտով կավարտի, բայց կրթության մասին օրենք այդպես էլ չի ընդունվել։

— Ներողություն, ստացվում է, որ ձեր սոցիալական պայքարն ուղղված է նաև ընդդեմ գործատուի, ո՞ւմ նկատի ունեք:

— «Կրթության մասին» օրենքի բացակայության պայմաններում 1991 թ. կառավարության հայտնի որոշմամբ կանաչ ճանապարհ տրվեց ձեռներեցությանը։ Եվ այդ որոշման արդյունքում հանրապետությունում բացվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցից ոչ մեկը հավատարմագրված չէ բարձրագույն կրթության և գիտության նախարարության կողմից, իսկ դրանց ուղիղ կեսը՝ նույնիսկ արտոնագրված չէ։ Սա շատ վատ է, և սրա կողքից անտարբեր անցնում են օրենսդիրները, գործադիրները, զանազան պետական այրեր։ Սա անհանգստացնող փաստ է, որը պետք է հուզի և մտահոգի ոչ միայն կրթահամակարգի այսօրվա հրամանատարներին, այլև բոլորին։ Քանի որ պետության կողմից չարտոնագրված բուհի որպես մասնագետ իրավազուրկ շրջանավարտը պետք է կյանք մտնի 21-րդ դարում և արդեն գործ ունենա գործազրկության հիմնահարցերը համակարգող պետական նախարարի կամ կազմակերպության հետ։

Եվ ավելի ու բարոյական կլինի, որ ոչ պետական բուհի ռեկտորը ևս մտահոգվի իր սաների վաղվա օրվա համար ու նրա միակ հոգսը չլինի այսօրվա շահութահարկի տոկոսաչափը։ Ահա այս առումով մենք պետք է պայքարենք նաև սույն երևույթի դեմ։

— Ձեր միությունը, անշուշտ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի անդամ է. ինչպիսի՞ն է փոխհարաբերությունները մյուս ճյուղերի հետ, կա՞ խնդիրների, նպատակների, ծրագրերի ընդհանրություն: Փնտրվո՞ւմ են այդպիսի համագործակցության եզրեր և հնարավորություններ:

— Հայաստանի նախկին ճյուղային արհմիությունները 1992 թվականից հանդես են գալիս կոնֆեդերացիայի կազմում, դրանք 26-ն են։ Շատ միություններ պաշտպանում են արտադրական ոլորտի մարդկանց շահերը, իսկ մի քանիսը, այդ թվում և մենք, ներկայացնում ենք հոգևոր ոլորտը, որը ամբողջությամբ սնվում է պետական գանձարանից։ Բնական է, որ շուկայական հարաբերությունների անցման փուլում ամեն մի արտադրող ցանկանում է իր արտադրանքը, իր աշխատուժը թանկ վաճառել։ Զարմանալի չէ նաև, որ մեր համակարգի աշխատողների շահերը հաճախ չեն համընկնում արտադրական ոլորտի աշխատողների շահերի հետ։ Ավելին, երբեմն նույնիսկ մեր շահերը բախվում են։ Սրա կողքից մենք անտարբեր չենք կարող անցնել։

Այսօր անհրաժեշտություն է, որպեսզի արհմիութենական աշխատանքում նորովի մոտեցում ցուցաբերվի սոցիոլոգիական հարցմանը, հասարակական կարծիքի ձևավորմանը և կանխատեսմանը։ Վերջիններս պետք է կազմեն արհմիության ռազմավարության ծրագրի փուլերը։ Ուրեմն, ցանկանք, որպեսզի ապրենք իրավական երկրում և սոցիալական խավերի շահերը պաշտպանենք քաղաքակիրթ ձևով։

ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ ՍԿԵՎՐԱՑՈՒ

Հակաճառությունները

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ՏԱՍՆՄԵԿ (ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ) ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ Է, ՔԱՆ ՊԵՏՐՈՍԻՆԸ, ԿԱՄ ՊԱՏՐԻԱՐՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ Է, ՔԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ (ԳՐՎԱԾ) ՀԱՅՈՑ ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԵՎ ԿԱՍՏԱՂՈՆԻ ՀԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀՈՐԴՈՐՈՎ

(Սկիզբը՝ № 7-ում)

Ապա լիկաթն առաջարկեց հաց ուտել, իսկ մենք չհամաձայնվեցինք և սաստիկ տխրած առաքելական Աթոռի նկատմամբ ցույց տրված արհամարհանքից, հեռացանք։ Ու ինձ այնպես է թվում, թե դա եղավ Աստծո նախաձեռնությամբ, քանզի ցանկանում էր մեզ մղել՝ գտնելու այս երկու խորհրդավոր և արժանավայել խոսքերը, որոնց մասին պատրաստվում եմ պատմել։ Եվ սրանից հետո, երբ տոնախմբությունը դադարեց, կանչեց մեզ և բարեհամբույր դեմք ընդունած, ասաց. «Երկար ժամանակ ցանկություն ունեի զրուցել քեզ հետ, քանի որ լսել էի քո մասին, թե քո ազգի գիտուններից մեկն ես, որպեսզի թերևս օգուտ քաղեի քեզնից։ Սակայն տոնի նկատմամբ ունեցած պարտականություններս մինչև այժմ ինձ թույլ չտվեցին. այժմ եկ խոսենք»։

Եվ, ես պատասխան տալով այդ խոսքին, ասացի. «Այդպիսին չեմ, ինչպիսին կարծում ես, և նա, ով պատմել է քեզ (իմ մասին) թերևս տեղյակ չի եղել, որ ես հետիններից մեկն եմ, այլ քո ասածը երկու պատճառ ունի, մեկը որ իմաստասիրական բարբով անճանաչ ես, և մյուսը՝ Փրկչին աշակերտելով՝ մեծարում ես անարգներին։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա հույժ ցանկանում էի գալ, որպեսզի սովորելով օգուտ քաղեմ, քանի որ շատ հմուտ եք Աստվածաշունչ Գրքերին։ Բայց իսկապե՞ս սրտանց ասացիր խոսքդ, քանի որ ոչ քիչ տրտմությամբ էի լցված քո արարմունքի պատճառով, որովհետև չընդունեցիր մեր ընծաները, որոնք ոչ ձեզ առավելություն կբերեին, ոչ էլ կնվաստացնեին առաքողին։ Եվ ոչ նամակն ընթերցեցիր, որ կարողանայի հաստատել կամ չհաստատել խոսքով, ոչ էլ կաթողիկոսի մաղթանքը լսեցիր»։

Եվ ժպտալով խոսքիս վրա, ասաց. «Այո, կանենք այնպես, ինչպես կամենում ես, միայն թե խոսենք»։ Եվ ես ասացի. «Թող քո խոսքը լինի»։ Իսկ նա ասաց. «Ինչպես ասացի, իմաստուն մարդ ես, և ինչի մասին խնդրում եմ, պատասխան տուր»։ Եվ այդ օրը նրա մոտ մեծ ժողով էր, որին ներկա էին քաղաքապետը՝ Զուփրի անունով մի հաշտարար մարդ, մայեստր Դանփլունը, հիվանդանոցի որդենի քումանդուրը, ծովեզրքի բոլոր իշխանները։ Սակայն չգիտենք այդ ժողովի հավաքման պատճառը, արդյոք մե՞նք էինք պատճառը, թե մի այլ պետքի համար էր։ Եվ ես ասացի «Ինչպե՞ս կարող եմ մի ողջ ազգի փոխարեն պատասխան տալ, մանավանդ՝ երբ խնդիրը վերաբերում է Եկեղեցուն։ [illegible] մի նայիր այն բանին, որ այստեղ եմ ուղարկվել որպես կատարյալ մեկը, քանզի բազմիցս է պատահում արքունիքում, որ բարեպաշտության են արժանանում առաջնորդները։ Հայոց Եկեղեցին ճարտար է իմաստուններով և Աստվածաշունչ Գրքերին հմուտ և տեղյակ անձերով, որոնցից հետինն եմ ես։ Սակայն (այն հարցերին), որոնց [illegible] և որոնց համար [illegible] մեր Հայաստանի [illegible] և վարդապետությունը, իմ կարողություններին [illegible] պատասխանեմ. [illegible] որոնց կարողանամ [illegible] կտանենք (կաթողիկոսը), [illegible] ընթերցումով, կհանի [illegible] առաքելությունից և պատասխան կտա ձեզ»։ Այս խոսքը հաճությամբ ընդունվեց բոլորի կողմից։ Եվ նաև ավելացրի. «Սակայն [illegible] ինձ էլ թույլ տուր խոսել և պատասխանել», [illegible] շատ էր խոսում և քիչ լսում։ «Եվ արդ, որովհետև իշխանություն ունեիր հարցնելու, [illegible] ասացիր, թե Պողոս [illegible] ասում է. «Այլ հիմք, որ չի կարող դնել, բացի դրվածը, որ Հիսուս Քրիստոսն է։ Եվ դա է ճշմարտությունը»։ Եվ ես ավելացրի [illegible] հենց դրան հետևյալ խոսքը. «Եթե մեկն այս հիմքի վրա կառուցի», հաստատուն կլինի։ Արդ, ուրեմն, կառուցենք ոչ թե հրից այրվող խոտով, ազնիվքն՝ ոչ թե նրանց ուսմունքից դուրս, այլ նրանց խոսքի համաձայն՝ Հոգու հրով փորձված և զտված ոսկով և արծաթով, որպեսզի կանգնուն մնա։ Իսկ ով կառուցի, առաքինի վարպետների նման կստանա իր վարձը»։ Եվ նրանք ասացին, այո։

Այն ժամանակ ես ասացի. «Որտեղի՞ց Հռոմի եկեղեցուն այդ իշխանությունը, որ ինքը դատում է այլ առաքելական Աթոռներին, իսկ ինքն այլոց կողմից չի քննվում, քանզի մենք առաքյալների օրինակով միշտ կարող ենք դատել ձեզ, իսկ դուք չեք կարող քննել մեզ»։

Իսկ նրանք, լսելով այս խոսքը, սաստիկ խռովվեցին, սակայն մեծահոգաբար ոչինչ չըպատասխանեցին, այլ հանդարտորեն հարցրին. «Իսկ ո՞վ է տվել ձեզ այդ պատիվը»։ Եվ ես ասացի. «Թող ասածս ձեզ արտասովոր չթվա, քանի որ խոստացա Աստվածաշունչ Գրքերից դուրս չգալ, և ես ցույց կտամ ձեզ աստվածային մատեաններից, որ մյուս առաքյալները դատեցին Պետրոսին՝ նաև մեղադրելով նրան այն ժամանակ, երբ նա Կոռնելիոսին մկրտելուց հետո գնաց Երուսաղեմ իրեն արդարացնելու համար, ինչպես պատմում է Ղուկասը՝ Գործք առաքելոցում։ «Առաքյալները և Հրեաստանի կողմերում գտնվող եղբայրները լսեցին, որ հեթանոսները ևս ընդունեցին Աստծու խոսքը։ Սակայն երբ Պետրոսը գնաց Երուսաղեմ, մեղադրում էին նրան, ովքեր թլպատությունից հետո էին հավատացյալ դարձել, այն բանի համար, որ մտավ անթլպատ այրերի մոտ և կերավ նրանց հետ։ Ապա Պետրոսը սկսեց նրանց հերթականությամբ պատմել տեսիլքը մինչև վերջ... «Եվ երբ սկսեցի խոսել,— ասաց, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա... և հիշեցի Տիրոջ խոսքը. որն ասում էր. Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք կմկրտվեք Սուրբ Հոգով»։

Տեսնո՞ւմ ես, որ նրան ոչ միայն իշխան չէին համարում և թույլ չէին տալիս անել կամեցածը, այլև իշխանաբար մեղադրում և դատում էին նրան։ Իսկ Պետրոսը, իրեն որպես իշխող չհամարելով նրանց վրա, ոչ թե իշխանաբար է պատասխանում, ինչպես Տերը։ Որն ասում է. «Կարող եմ ունեցածիս հետ վարվել, ինչպես կամենում եմ», այլ խոստովանվում է, որ հրամանն Աստծո կողմից էր և ոչ թե ըստ իշխանության՝ ասելով. «Ուրեմն, եթե Աստված նրանց էլ նույն պարգևը տվեց, ինչպես և մեզ, երբ Տեր Հիսուս Քրիստոսին հավատացինք, ապա ես ինչպե՞ս կարող էի արգելել Աստծուն»։ Իսկ երբ լսեցին այս, դրանից հետո լռեցին», այսինքն (հրաժարվեցին) շտապ քննությունից։

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է ցույց տալիս, որ Պետրոսը գլխավորը չէ։ Եվ գիտեմ, որ այս մասին ասում են, թե՝ մեղադրել ասում է ոչ թե առաքյալների համար, այլ նորադարձ հավատացյալների համար և Պետրոսն այդպես վարվեց նրանց [illegible] պատճառով, [illegible] նրանց (ի Քրիստոս), ինչպես ասում է Պողոսը, թե՝ «Տկարացածին ընդունեցեք հավատի մեջ»։ Այս մասին ասում ենք, թե նրանց մեջ (հավատով) տկար չըկար, քանի որ ասում է, թե՝ «Բոլորն ունեին մեկ սիրտ և մեկ անձ»։ Եվ դարձյալ եթե դրանք (մնացած) տասնմեկը չէին, արդյոք ո՞ւմ էր պատասխան տալիս Պետրոսը, թե՝ «Երբ սկսեցի խոսել, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ինչպես սկզբում մեզ վրա»։ Իսկ ովքե՞ր էին սկզբում Վերնատանը, եթե ոչ [illegible] տասներկու (առաքյալները), և կամ ո՞ւմ պատմեց, եթե ոչ Տիրոջից այն խոսքը լսողներին և ճանաչողներին, թե «Հիշեցի Տիրոջ խոսքը, որ ասում էր, թե Հովհաննեսը մկրտեց ջրով, սակայն դուք կմկրտվեք Սուրբ Հոգով»։

Տեսնո՞ւմ եք, թե ինչպես ապացուցվեց, որ Պետրոսը դատվել է տասնմեկի կողմից, և ոչ մի տեղից չի երևում, որ Պետրոսը որևէ ձևով դատել է տասնմեկին։

Եվ կրկին խոսում եմ սիրո մասին, որին ապաշխարաբար ապավինեցին։ Աղաչում եմ ձեզ Աստծո գթությամբ՝ ըստ առաքյալի և խրատում ինչպես եղբորով հզորացած եղբայրը. այդ լծի տակ մի դրեք (հայոց) եկեղեցին, որի տակ չեն եղել մեր հայրերը. Նկատի ունեմ ծառայական հնազանդությունը, որի տակ մենք էլ չենք կարող մտնել։ Իսկ սիրո համար, որի համար հրաման ունենք Աստծուց և սուրբ առաքյալներից, պատրաստ ենք՝ ըստ Քրիստոսի խոսքի. «Եթե սիրեք միմյանց, դրանով կճանաչեն, որ իմ աշակերտներն եք», իսկ Պողոսը մասնավորեցնում է, թե եկեղեցական կարգավորության տեսանկյունից ամենակարևորը սերն է՝ ասելով. «Սրանց դրեց Աստված Եկեղեցում, առաջին՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին» և ըստ կարգի նաև՝ եկեղեցու (մյուս) անդամներին։ Եվ երբ թվարկում է յուրաքանչյուրի շնորհները, ասում է. «Նախանձախնդիր եղեք լավին. սակայն ես առավել (գերազանց) ճանապարհ ցույց կտամ ձեզ։ Քանզի եթե խոսեմ թե՛ մարդկանց և թե՛ հրեշտակների լեզուներով և թե ունենամ այնքան մարգարեություն ու հավատք, որ կարողանամ մինչև իսկ լեռները տեղափոխել, և սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա»։

Իսկ Հովհաննեսն ասում է Ընդհանրականում (թղթում), թե «Հոր պատվիրանն այն է, որ հավատանք նրա Որդի Քրիստոսի անվանը և սիրենք միմյանց, քանի որ այդ է նրա պատվիրանը»։ Արդ այս բարձր պատվիրաններին, որ (գալիս են) Աստծուց և սրբերից, ամբողջովին պատրաստ է Հայոց Եկեղեցին և ոչ թե՝ նոր-նոր սկսելով, այլ շատ հնուց, ինչպես որ սկզբից ժառանգելով կրում է սերը մանավանդ հռոմեացիների նկատմամբ։ Դա կարող են վկայել ձերոնցից նրանք, ովքեր ներկա են այստեղ և ճանաչում են մեզ։ (Մենք սիրով ենք) նաև այլ ազգերի նկատմամբ, թեպետ դա չի կարելի համեմատել ձեր (նկատմամբ տածածի հետ)։ Այնուամենայնիվ, առանձին ազգերի առաջնորդները, ըստ իրենց կարգի և պաշտամունքի, անխռով են մեր աստվածապարգև թագավորության մեջ՝ չունենալով մեր աստվածասեր թագավորից որևէ պահանջ՝ քահանայական կարգի և Եկեղեցու ավանդությանը վերաբերող, ինչը խնդրում ենք Աստծուց՝ անշարժ պահել Հայքում։

Լիկաթն ասաց. «Ոչ թե սիրո պատվիրանը խախտելու համար ենք հնազանդություն պահանջում, այլ իրար հետ սերտ կապվելու (մտահոգությամբ), որի համար բերեմ հետևյալ օրինակը, ինչպես մարմնի բոլոր անդամները գլխի հետ են կապված սիրով, այդպես էլ բոլոր Եկեղեցիները պարտավոր են հնազանդվել Հռոմի Եկեղեցուն՝ որպես գլխի, որպեսզի ամբողջություն կազմեն բոլոր անդամները»։

Եվ պատասխանեցի սրան. «Չենք կարող որևէ մեկի հնազանդության տակ մտնել, քանի որ Աստծուց մեզ հավասար ազատություն ենք ստացել՝ ըստ տասներկու (առաքյալների համապատվության), քանի որ հնազանդությունը ծառայական է և աշխարհական և ոչ թե առաքելական, ինչպես որոշակիորեն մեզ ավանդեցին առաքյալները, թե որոնց և ում պետք է հնազանդ լինել։ Երանելի Պետրոսը գրում է. «թե «Հնազանդ եղեք (բոլոր) մարդկային իշխանություններին՝ լինի թագավորին՝ իբրև բոլորից գերագույնին», և Պողոսը թե՝ «Հնազանդ եղեք տերերին»։ Եվ չհամարձակվեցին գրել տասներկուսի՝ միմյանց (ենթարկվելու) մասին, քանի որ գիտեին, որ Բանն Աստված իրենց միջից վերացրել է ծառայական հնազանդությունը, ասելով. «Դուք ծառաներ չեք, քանի որ ծառան ոչինչ չգիտի Տիրոջ մասին, այլ դուք իմ բարեկամներն ու խորհրդակիցներն եք»։ Ուրեմն ինչպե՞ս կարող ենք հնազանդության տակ մտնել՝ վերստին ծառա դառնալով հակառակ մեր ազատության, որը տվեց մեզ Քրիստոս»։

Այս (խոսքերին նա) այդ օրը ոչինչ չպատասխանեց, իսկ հաջորդ օրը լիկաթն ասաց. «Մենք ձեզնից չենք պահանջում հնազանդվել, ինչպես ծառաները՝ տիրոջը, այլ ինչպես որդին՝ հորը, ինչպես գրում է Պողոսը՝ թե «Որդիներ, հնազանդ եղեք (ձեր) հորը»։

Պատասխան տվեցի և ասացի, թե՝ «Այդ էլ է արգելում մեզ Քրիստոս, ասելով. «Երկրի վրա որևէ մեկին ձեզ հայր մի անվանեք, քանի որ մեկն է ձեր հայրը, որ երկնքում է», իսկ Պետրոսը երկրավոր է և ոչ թե երկնավոր։ Ուրեմն ինչպե՞ս կարող ենք հրաժարվել երկնավոր Հոր որդեգրությունից և դառնալ Պետրոսի որդի, հետևելով ձեր խրատին և զանց առնելով մեր Քրիստոս Աստծո խրատը։ Քանզի այս մասին զգուշացնում է մեզ հենց ինքը՝ Պետրոսը, թե՝ «Աստծուն պետք է հնազանդվել առավել, քան մարդկանց»։ Դարձյալ, քանզի սովորություն ունենք հայրեր կոչելու (մեզ) Ավազանով վերստին ծնողներին, (այսինքն՝ մկրտող հոգևորականին), իսկ Պետրոս առաքյալը չի մկրտել (մնացած) տասնմեկին և նրանց միջոցով՝ մեզ, ինչո՞ւ նրան հայր կոչենք։ Իսկ եթե ասեն. «Ինչո՞ւ եք ամբողջովին վերացնում հնազանդությունը Եկեղեցուց, արդյոք չե՞ք հիշում Պողոսի ասածը կորնթացիներին, թե՝ «Գիտե՞ք Ստեփանոսի և Փորտունատոսի տները, որոնք իրենց նվիրեցին սրբերի ծառայությանը. աղաչում եմ, որ դուք էլ նրանց հնազանդ լինեք», և դրա նման տեղիները (Սուրբ) Գրքից»։ Նրանց կասենք, որ ոչ թե մերժում ենք ներքևինների հնազանդությունը վերևինների նկատմամբ, այլ միայն՝ տասներկու առաքյալների՝ (միմյանց նկատմամբ հնազանդությունը), որոնք ունեն միևնույն իշխանությունը և պատիվը»։

Իր ընկերների հետ բավական հուզված՝ լիկաթն ասաց. «Այդ ինչպե՞ս է, որ Պետրոսն առաքյալների գլուխը չէ»։

Պատասխան տվեցի և ասացի. «Չգիտեմ, թե դա ինչպես է եղել»։

Այն ժամանակ լիկաթն ասաց. «Ինչպե՞ս չգիտես, երբ համբառնալուց հետո նրան Քրիստոսը գլուխ կարգեց»։

Եվ ես ասացի. «Այդ մասին բնավ տեղյակ չեմ, այն էլ՝ երկու պատճառով. կամ որպես մարդ մոռացել եմ (Սուրբ Գիրքը) ընթերցելուց հետո, կամ էլ մեզ չեն հասել (ակնարկածդ) գրությունները։ Սակայն ինձ համար մեծ պարծանք կլինի այդ խնդրում աշակերտել Հռոմի եկեղեցուն։ Աղաչում եմ, սովորեցրեք ինձ, սակայն դուրս չգաք այս չորս Ավետարաններից և Գործք առաքելոցից։ Պողոս առաքյալի և Ընդհանրական թղթերից, որոնց կհնազանդվենք, ինչպես Աստծո հրամաններին»։

(Այն ժամանակ) լիկաթը հետևյալ օրինակը բերեց. «Երբ ձեր թագավորը դուրս է գալիս երկրից, արդյոք որևէ մեկին իր փոխարեն գլխավոր չի՞ նշանակում»։

Ես պատասխանեցի. «Այո»։

Ու նա շարունակեց. «Իսկ նրան հավասարապես հնազանդվո՞ւմ եք»։

Եվ ասացի. «Նրան հնազանդվում ենք՝ ոչ թե առաջին պատիվն ունենալու համար, այլ այնքանով, որքան իշխանություն է տալիս նրան թագավորը»։

Իսկ նա ասաց. «Այդպես էլ բոլոր պատրիարքները և կաթողիկոսները և արքեպիսկոպոսները և եպիսկոպոսները, պարտավոր են հնազանդվել Պետրոսի Աթոռին՝ որպես գլխավորի։ Եվ քանի որ հաճախ էր այդ շարքում հիշատակում (մեր) կաթողիկոսին, շատ ընդդիմախոսեցի, իսկ (այդ խնդրի տված) պատասխանները հետո կպատմենք ձեզ։

Ապա այն խնդրի մասին ասացի. «Եթե ցույց տաք առաքելական մատեաններից, թե (այս աշխարհից) ելնելիս Քրիստոս տասներկուսի գլուխ կարգեց Պետրոսին, ապա կըհամաձայնվենք, քանի որ նրա ծառաներն ենք։ Սակայն մենք էլ անտեղյակ չենք Փրկչի ելքին (այս աշխարհից)՝ ըստ այն խոսքի, թե՝ «Ելնում եմ ես իմ Հոր մոտ», քանզի երկու ելք ունեցավ (Փրկիչը). առաջինը՝ զորությամբ, երբ պատրաստվում էր կամավոր չարչարանքներով ելնելու մահվան՝ ասելով. «Գնում եմ ինձ առաքողի մոտ, իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին. որին իմ անունով կառաքի Հայրը. նա կգա և ձեզ կուսուցանի ամեն բան և կհիշեցնի ձեզ այն, ինչ ասացի ձեզ»։

(Շարունակելի)



ԱԿՆԹԱՐԹ. ԱՐԱՄ ՎՐՈՒՅՐ: Դարասկզբին արված այս լուսանկարը Անիի մեծ երախտավորի եզակի պահն է պատկերում: Ինքը՝ Արամ Վրույրը, պատմությանը թողեց անվանի մարդկանց և հատկապես Անիի պեղումների ու դրանց կազմակերպիչների հազարավոր լուսանկարներ, 1904-ից մինչև 1917 թ. մասնակցելով Ն. Մառի գլխավորած Անիի, Դվինի, Վանի պեղումներին: Այդպիսին էր դերասան, թատերական գործիչ, հնագետ և լուսանկարիչ Արամ Վրույրը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ գիտաժողով:

Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ, ՀՀ ԳԱԱ համակարգի այն աշխատողները, ովքեր մասնակցել են Երկրորդ աշխարհամարտին, պատերազմի ու աշխատանքի վետերանները: Գիտաժողովում բացման խոսք ասաց և հոբելյանի առթիվ ներկաներին ջերմորեն շնորհավորեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս, պատերազմի վետերան Ֆ. Տ. Սարգսյանը:

Ապա գիտաժողովը լսեց մի շարք զեկուցումներ, որոնք լուսաբանում էին ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված էր ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայ ժողովրդի ավանդին: Եվրոպական երկրների դիմադրության շարժմանը հայերի մասնակցության հարցերին էր նվիրված ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի զեկուցումը: «Կովկասը գերմանա-թուրքական ագրեսիվ պլաններում» թեմայով զեկուցեց պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Մուրադյանը: Հայկական դիվիզիաների անցած մարտական փառավոր ուղու մասին պատմեց իր զեկուցման մեջ պատմ. գիտ. դոկտոր Կ. Հարությունյանը, իսկ պատմ. գիտ. թեկնածու Գ. Աբրահամյանը զեկուցեց «Հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի մասնակցությունը Բեռլինի գրավման մարտերում» թեմայով: «Զորավար Հ. Բաղրամյանը և «Բագրատիոն» օպերացիան» թեմայով զեկուցում կարդաց պատմ. գիտ. թեկնածու Մ. Սահակյանը, իսկ Հ. Հովհաննիսյանը զեկուցեց երկրորդ ճակատի հիմնահարցի լուսաբանման մասին:

Ներկաներին ջերմորեն ողջունեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Անդրեյ Ուրնովը: Պատերազմի մասնակիցներին հանձնվեցին հոբելյանական մեդալներ:

Դեպի Մուսալեռ...

ԴԱՐԱՍԿԶԲԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՎԵՐԸ

(«ԳԱՐՈՒՆ» ՏԱՐԵԳՐՔԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ 85-ԱՄՅԱԿԸ)

«Մեծարգո պարոն: Մոսկվայում կազմված մի գրական խմբակի նախաձեռնությամբ 1910 թվից կսկսեն հրատարակվել մի շարք գրական-գեղարվեստական ալմանախներ «Գարուն» վերնագրով: Ալմանախը պիտի հնարավորություն տա մեր բոլոր ռուսահայ և տաճկահայ հեղինակների հավաքական արտահայտության և խրախուսողը հանդիսանա երիտասարդ ու սկսնակ գրողներին: Արդ «Գարունի» խմբագրությունը սրանով պատիվ ունի խնդրելու նաև ձեր մասնակցությունը՝ համոզված, որ Դուք ևս կընդառաջեք միացած ուժերով լրացնելու մեր հայ գրականության մեջ այն բացը, որ կոչված է մասամբ բռնելու ներկա ձեռնարկությունը...»:

Ապագա ալմանախի խմբագրության մեջ ընդգրկված էին հայտնի գրականագետներ Կարապետ Կուսիկյանը, Ցոլակ Խանզադյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Պողոս Մակինցյանը, Կարեն Միքայելյանը, անվանի բանաստեղծներ Վահան Տերյանը և Ալեքսանդր Ծատուրյանը:

Վերոհիշյալ կոչի հեղինակները եռանդուն գործունեություն ծավալեցին տարեգրքի հրատարակությունը իրականացնելու համար: Այդ մասին է վկայում նաև նրանց միջև ծավալված աշխույժ նամակագրությունը:

Այսպես, 1908 թ. մայիսի 13-ին Վահան Տերյանը Թիֆլիսից գրում է Ց. Խանզադյանին. «...Այստեղ համակրանքով են վերաբերվում դեպի մեր ձեռնարկությանը. Շանթը, Ավոն, Նար-Դոսը, Թումանյանը խոստանում են աշխատակցել»: Հաջորդ օրը Տերյանն ավելի հանգամանորեն տեղեկացնում է Կ. Կուսիկյանին. «Ստացա կոչը և տեղեկություններ ըղձալի Ալմանախի մասին: Այստեղ (Թիֆլիսում— Ռ. Բ.) մի քանի գրողներ, որոնց հայտնեցի Ձեր մտադրության մասին, համակրությամբ վերաբերվեցին Ձեր ձեռնարկության, պատրաստակամություն հայտնելով աշխատակցել՝ օրինակ Թումանյան, Իսահակյան, և ասացին, որ մյուս գրողներն էլ մեծ ուրախությամբ կմասնակցեն: Շանթը, իմիջիայլոց, նկատեց, որ, իր կարծիքով, «գրողի համար պետք է մեծ նշանակություն ունենա, թե որտեղ է տպագրվում իր աշխատությունը»: Այնպես որ, աչքի առաջ ունենալով մեր Ալմանախի նպատակները և ընդհանուր բնույթը, պետք է, որ նրա կարծիքով, բոլոր հայ գրողները համակրալից արձագանք տան այդ ձեռնարկությանը: Նար-Դոսը և մի քանի երիտասարդ հեղինակներ ևս իրենց պատրաստակամությունը հայտնեցին՝ մասնակցելու Ալմանախում և ասացին, որ նա հաջողություն կունենա»:

Այսպիսով, «Գարունը» խոստանում էր թարմ հոսանք բերել հայ գրականության մեջ: Եվ ընթերցողը հուսախաբ չեղավ: Առաջին գիրքը, որը լույս տեսավ 1910 թ. գարնանը, անունների մի ծաղկեփունջ ներկայացրեց հայ հասարակությանը: Այստեղ տեղ գտան Ավ. Իսահակյանի «Երազիս տեսա» բանաստեղծությունը և «Օմար Խայամի վեճը Աստծո հետ» պատմվածքը, Ալ. Ծատուրյանի «Ալիք», «Երազներ էին...», «Քրքիջ», «Կարմիր օբերից», Վ. Տերյանի «Մոռացված ուղի», «Վերադարձ», «Ոսկե հեքիաթ» գրքից բանաստեղծությունները, ինչպես նաև Հակոբ Հակոբյանի, Շուշանիկ Կուրղինյանի, Լևոն Շանթի, Ավետիս Ահարոնյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Վրթանես Փափազյանի, Կարեն Միքայելյանի և այլոց ստեղծագործությունները, ընդհանուր առմամբ 25 գործ:

«Գարունի» առաջին գիրքը ձևավորել էր Մարտիրոս Սարյանը:

Հաջողությունն ակնհայտ էր, և խմբագրական կոլեգիան (Վ. Տերյան, Ալ. Ծատուրյան և Կ. Միքայելյան) մեծ եռանդով սկսեց հավաքել նյութեր՝ երկրորդ գրքի համար, որը նախատեսվում էր լույս ընծայել 1911 թ. գարնանը: Ալ. Ծատուրյանը Մոսկվայից 1911 թ. փետրվարի 23-ին գրում էր Նար-Դոսին. «...Միքայել ջան, ի՞նչ է պատճառը, որ դու Մոսկվայում հրատարակվող «Գարուն» ալմանախին չես մասնակցում: Երևի տեսած կլինես այդ հրատարակությունը, կարդացած և համոզված, որ դա զուտ գրական-գեղարվեստական մի ժողովածու է և ոչ մի կապ չունի մեր մեջ տիրող կուսակցական գարշահոտության հետ: Հավատացած էի, որ գոնե 2-րդ գրքի համար, որն արդեն տպվում է, մի բան կուղարկես՝ իմանալով, որ վաղեմի մտերիմ ընկերդ էլ «Գարունի» խմբագրության անդամ է: Սակայն դեռ ուշ չէ, սիրելիս, ձեռքիդ տակ մի բան կունենաս, մի զրույց, մի պատկեր, շտապիր ուղարկել»:

Երկրորդ գիրքն ավելի ծավալուն էր (այն ընդգրկում էր արդեն 30 գործ) և նորից գրավեց հայ գրասերների ուշադրությունը: Այլ կերպ չէր էլ կարող լինել. չէ՞ որ «Գարունը» ներկայացրել էր Ավ. Իսահակյանի նոր բանաստեղծությունները («Անգիր և անհայտ», «Հեծկլտող քամին», «Գիշերը պատեց»), «Անհաղթ Խալիֆան» պատմվածքը, Շիրվանզադեի «Արմենուհի» դրաման, Ալ. Ծատուրյանի «Անցիր, այ աղջիկ», «Երազն է կանչում», «Գեղեցկության երգերից», «Սիրավեպ» բանաստեղծությունները, Վ. Տերյանի գոհարները «Ոսկե հեքիաթ» գրքից: Տպագրվել էին նաև Հ. Հակոբյանի «Աշխատանքի երգը», Դ. Դեմիրճյանի «Գիշեր է» բանաստեղծությունները, Ռուբեն Սևակի, Օնոփրիոս Անոփյանի, Զիֆթե Սարաֆի, Միք. Մանվելյանի, Սիմոն Բաբիյանի, Կարեն Միքայելյանի և այլոց չափածոն և արձակը...

«Գարուն» տարեգրքի խմբագրությունը որոշում է իր ժողովածուի հերթական, երրորդ գիրքը հրատարակել գրաքննադատական ուղղվածությամբ: Այսպես, Արշակ Չոպանյանին հղված նամակում (23 օգոստոսի 1911 թ.) Վ. Տերյանը Մոսկվայից հայտնում է, որ «ի նկատի են առնված և արդեն խմբագրության տրամադրության տակ են գտնվում» ուսումնասիրություններ հետևյալ գրողների մասին՝ Խ. Աբովյանի, Ս. Շահազիզի, Մ. Նալբանդյանի, Ա. Ահարոնյանի, Ա. Ծատուրյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, և խնդրում է. «...խմբագրությունն ամենացանկալին համարեց տեսնել Ձեր անունն իր այդ գրքի ցանկի մեջ, որի համար դիմում է Ձեզ և խնդրում, որ չմերժեք մեզ ուղարկել մի փոքրիկ ուսումնասիրություն, հակառակ դեպքում՝ մի թռուցիկ ակնարկ և կամ նույնիսկ դիտողություններ տաճկահայ ժամանակակից գրականության մասին»: Ցավոք, այդպիսի նյութ ալմանախի 3-րդ, գրական-քննադատական հատորում, տեղ չի գտել...:

Այդ գիրքը (ծավալը 370 էջ) մեծ արձագանք ունեցավ: Եվ դա զարմանալի չէր, քանի որ այստեղ Կ. Կուսիկյանը, Ց. Խանզադյանը, Ալ. Մարտունին (Մյասնիկյանը), Պ. Մակինցյանը, Դ. Անանունը, Ալ. Ռուբենին քննադատական ծանրակշիռ հոդվածներ էին ներկայացրել Աբովյանի, Շահազիզի, Թումանյանի, Ավետիս Ահարոնյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի, Ավ. Իսահակյանի մասին: Պետք է նկատել, որ որոշ դեպքերում դրանք առաջին, քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրություններն էին հայ խոշորագույն բանաստեղծների և գրողների մասին, նրանց ստեղծագործության, գրական վարպետության և ոճի բացահայտման առաջին լուրջ փորձերը:

Այս քննադատներն իրենց առջև խնդիր էին դրել նորովի մեկնաբանել դասական և ժամանակակից գեղարվեստի հարցերը, և դա հիմնականում հաջողվել էր... Ըստ ակադեմիկոս Էդուարդ Ջրբաշյանի, «նրանք գրական ստեղծագործություններն սկսում են գնահատել ոչ միայն ազգային կյանքի ընթացիկ պահանջների, այլև արվեստի համընդհանուր խնդիրների և կոչման տեսանկյունից»:

Նշելով քննադատների նոր սերնդի մուտքը հայ գրականության մեջ, գնահատելով նրանց բերած սկզբունքային նորույթները, Հովհ. Թումանյանը հենց 1913 թ. մի հոդվածում նշում էր. «Չեմ սխալվի, եթե ասեմ, նորություն են մեր կյանքում եվրոպական գրական ճաշակ ու զարգացում ունեցող մարդիկ, որոնք և մեր գրականությունը գալիս են քննադատելու նոր, մեր գրական աշխարհին անծանոթ ձևով ու թափով...»:

1912 թ. հուլիսի 5-ին Նար-Դոսը գրում է Ա. Ծատուրյանին. «...«Գարունի» վերջին գիրքը բացառիկ հետաքրքրություն է հարուցել... իմ կարծիքով, խմբագրողները շատ մեծ ծառայություն արած կլինեն մեր գրականությանը, եթե ալմանախի հետագա գրքերը ևս, եթե ոչ ամբողջովին, գեթ մի մասով նվիրեն զուտ քննադատական հոդվածների: «Գարունի» վերջին գրքի գրեն ազդեցությունն ընթերցողների և գրողների շրջանում անուրանալի է...»:

Ոգևորված տարեգրքի հաջողությամբ, «Գարունի» խմբագրությունը սկսում է աշխատանքը չորրորդ գրքի վրա: Դրա մասին է վկայում մասնավորապես աշխույժ նամակագրությունը Վ. Տերյանի և Կ. Միքայելյանի միջև: Ցավոք, հասարակական-քաղաքական իրավիճակը սրվում է, վրա է հասնում առաջին համաշխարհային պատերազմը... և գործը կանգ է առնում:

Հաջորդ տարիներին (1915—1916 թթ.) Վահան Տերյանը փորձում է քայլեր անել տարեգիրքը վերակենդանացնելու ուղղությամբ: Այսպես, 1916 թ. ապրիլի 23-ին Պետերբուրգից նա հայտնում է Կ. Միքայելյանին, որ նույն տարվա աշնանը ծրագրված է «Գարունի» չորրորդ գրքի թողարկումը և համապատասխան հայտարարություն է տրված այդ մասին «Մշակ» և «Հորիզոն» թերթերին: 1916 թ. հունիսի 8-ի «Հորիզոնի» համարում զետեղված հայտարարությունից տեղեկանում ենք նաև, որ խմբագիր-հրատարակիչներն են Պ. Մակինցյանը, Կ. Միքայելյանը և Վ. Տերյանը, համագործակցությամբ են հրավիրված նշանավոր գիտնականներ Մառը, Օրբելին, Ադոնցը...

Սակայն արդեն աշնանը, հոկտեմբերի 14-ին գրած նամակում բանաստեղծը խոստովանում է Կ. Միքայելյանին, որ «Գարունը» «վատ հայի է» և իր իսկ կարծիքով «ուղարկված նյութերից ոչինչ չունենք ընտրելու «Գարունի» համար»...

Այնուամենայնիվ, 1916-ին Տերյանը Մոսկվայից գալիս է Թիֆլիս՝ «Գարուն» ալմանախի համար նյութեր հավաքելու: Ականավոր գրող Ստ. Զորյանն իր հիշողություններում այս առիթով գրում է. «Խոսելով «Գարունի» մասին՝ նա (Տերյանը,— Ռ. Բ.) ոգևորվեց հետզհետե և պարզեց իր և ընկերների նպատակը՝ մտածում են «Գարունը» դարձնել պարբերական և նրա միջոցով նորոգել մեր լեզուն, մեր արվեստը: ...Տերյանն ուզում էր գրական նոր շարժման կամ հոսանքի ղեկավար լինել և ստեղծել գրականության նոր որակ»:

Բնական է, որ այդ իղձը բանաստեղծը կապում էր առաջին հերթին երիտասարդության հետ և ասում. «Ուզում ենք «Գարունը» դարձնել երիտասարդների օրգան: Մի թարմ հոսանք, մի նոր շարժում պետք է առաջ բերել մեր կանգ առած գրականության մեջ... Ուզում ենք 35-ից բարձր տարիք ունեցողները չմասնակցեն... Տպիքավորները արդեն իրենց խոսքն ասել են»: Իհարկե, կարելի է չհամաձայնել բանաստեղծի վերջին մտքի հետ, սակայն փաստը այն է, որ «Գարունը» դիտվում էր որպես թարմ ուժերի, նոր մտքերի խթանիչ:

...«Գարուն» տարեգիրքը փայլատակեց 10-ական թվականների հայ գրական երկնակամարում, գարնանային նոր հովեր բերեց և անվիճելի դրական դեր ունեցավ հայ ժողովրդի հոգևոր կյանքում:

Ռոբերտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայկական գաղթականությունը Ուրուգվայում

Ուրուգվայն առաջին պետությունն է, որ 1965-ին ճանաչեց հայկական ցեղասպանությունը: Այս փաստը պատճառ եղավ, որ Հայաստանն ու սփյուռքն առավել ուշադրություն ցուցաբերեն տեղի փոքր գաղութին: Այստեղ-այնտեղ ցրված կցկտուր տեղեկությունները անբավարար են: Այս ամենը շտկելու համար ուրուգվահայ հետազոտողներ Ալբերտ Տիրունյանը և Դանիել Գարամանուկյանը տարեսկզբին հրապարակեցին «Հայկական գաղթականությունն Ուրուգվայի մեջ» գրքի առաջին հատորը, որը ունի 350 էջ և բաղկացած է 11 գլուխներից: Նրան պետք է հետևի երկրորդ գիրքը՝ 8 գլուխներով: Զուտ ֆինանսական պատճառով գիրքը բաժանված է երկու մասի. առաջին գրքի եկամուտներով պետք է հրատարակվի երկրորդ հատորը:

Հեղինակները նախաբանի մեջ մեկնաբանում են փաստերը, իրենց աշխատանքի տարբեր ուղղությունները, հարցազրույցներ եղեռնից վերապրածների և գաղթականների սերունդների հետ, տպագիր սակավաթիվ աղբյուրների զննում, ուրուգվայական և հայկական մամուլի մասնակի հետազոտություն, մատչելի արխիվների քննություն: Այս բոլորը, մեծ մասամբ անտիպ և ուսումնասիրության կարոտ, վերածված է գիտական շարադրանքի: Հարկ է նշել, որ մինչև վերջերս ուրուգվահայ մամուլը արհամարհված էր և անհայտ էր մատենագիրներին:

Ալբերտ Տիրունյանը և Դանիել Գարամանուկյանը մեծ աշխատանք են կատարել՝ վերակազմելով և հավաքելով բանավոր պատմություններ:

Երբ գիրքն արդեն պատրաստ էր հրատարակելու, հեղինակներից մեկը հանդիպեց Ավետիք Պոյատուֆյանին, որը հեղինակ էր ստվարածավալ ձեռագիր հուշերի: Եվ վերջինս բազմաթիվ հուշեր պատմեց 1935—36 թվականների անցուդարձից:

Դարասկզբին Հարավային Ամերիկայի երկրները սկսել էին խրախուսել ներգաղթը, քանի որ աշխատուժի պակաս կար: Աղետից ազատված և միջին արևելյան որբանոցներում կամ ճամբարներում ապաստանած տարագիրներն աշխատում էին իրենց կյանքը վերակերտել: Այդպես սկսվում է հայերի մուտքը նաև Ուրուգվայ: Գրքի մի բաժնում վերապրողի խոսքում շատ դիպուկ է ասված. «Երբ Երուսաղեմում էի, հիշում եմ, որ հորեղբայրս ցույց տվեց մի թերթ, որտեղ ասվում էր, թե Ամերիկայի մեջ երկիր կար՝ Ուրուգվայը, որ գաղթականներ կընդուներ, ուր ցեղային հարցեր և կրոնական հալածանքներ չկային և շատ գեղեցիկ կլիմա ուներ»:

Մինչդեռ, պարզվում է, որ 1729 թվականից հայերն արդեն թափանցել էին Ուրուգվայ: Առաջին հայը եղել է Մոնտեվիդեո խարսխած նավի տնտեսը, իսկ երկրորդը՝ վանեցի վարժապետն էր, որը 1862 թվականին Բրազիլիայից տեղափոխվեց Մոնտեվիդեո: Ըստ հեղինակների կատարած հաշվարկների, 1888—1960 թվականներին ծովային ճանապարհով Ուրուգվայ են եկել 6112 հայեր, որոնց 78 տոկոսը տեղ են հասել 1923—31 թվականներին, երբ Կիլիկիան հայաթափվեց և կնքվեց Լոզանի դաշնագիրը:

Տիրունյանը և Գարամանուկյանը մանրամասն վերլուծել են այս ցուցակները:

Գրքի բուն շարադրանքից հետո, հավելվածը կներկայացնի Մոնտեվիդեոյի նավահանգստից Ուրուգվայ մտած հայերի ամբողջական ցանկը՝ քաղված պաշտոնական արձանագրություններից:

Մեծ հարստություն է այս գիրքը, և այն չի կարելի անտարբերության մատնել:

Տիրունյանը և Գարամանուկյանը հնագետի համբերությամբ փրկել են պատմությունը ժամանակի մոռացումի փոշիներից: Հուսանք, որ երկրորդ հատորը շուտով նույն հաջողությամբ կպարզի գաղութի ներաշխարհը, որի վերլուծումը կարող է օգնել հասկանալու նրա տխուր ներկան ու ապագայի հեռանկարները:

Տպագրության պատրաստեց
Փառանձեմ ԲԱՂՄԱՆՅԱՆԸ
«Հրաչյա Աճառյան» Համալսարանի ուսանողուհի

ՀՌՈՄ. Վենետիկյան հրապարակ:

ԵԹԵ ՁԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԸ ՉԷ, ԳՆԱՑԵՔ ՎԱՐՍԱՎԻՐԻ ՄՈՏ

Իտալացի մի խումբ հոգեբույժներ երկար ժամանակ կարևոր վիճակագրական տվյալներ են հավաքել, թե իրենց հիվանդները ինչպե՞ս են վերաբերվում սեփական արտաքինին: Եվ հենց այդ արտասովոր տվյալներից ելնելով, նրանք խորհուրդ են տալիս. «Եթե տրամադրությունդ վատ է, գնա վարսավիրի մոտ»:

Ինչո՞ւ: Որովհետև պարզվում է, որ շիզոֆրենիայով, ընկճավորությամբ և ցիկլոֆրենիայով տառապողների մեջ պարբերաբար մեծ ցանկություն է առաջանում ինչ-որ բան կտրել՝ բեղերը, մազերը, պատահում է նաև՝ ականջը:

Ի դեպ, մազերի հետ ինչ-որ գործողություն կատարելու ձգտումը, որպես սկսվող դեպրեսիայի նախնական կանխանշան, նկատել է դեռևս Ֆրեյդը:

Այնպես որ, վատ տրամադրության առաջին կանխանշանները նկատելիս, որպես հակամիջոց, անմիջապես փոխեք ձեր սանրվածքը,— առաջարկում են հոգեբույժները: Քանի որ մազերը կտրելն ու հարդարելը միշտ էլ բարենպաստ ազդեցություն է ունենում հոգեկան վիճակի վրա և խոչընդոտում է օրգանիզմում դեպրեսիայի հորմոնների առաջացմանը:

ՇԱՔԱՐԸ՝ ՍԱԼՄՈՆԵԼՈԶԻ ԴԵՄ

Հայտնի է, որ սալմոնելյոզով մարդիկ վարակվում են հավի ձվից կամ վատ եփված հավի մսից: Բանն այն է, որ հենց հավերի աղեստամոքսային տրակտում են գոյանում սալմոնելյոզի վարակի հարուցիչները, որոնք, ի դեպ, բացարձակապես անվնաս են թռչունների համար

Ամերիկյան գիտնականները հայտնաբերել են հավերին սալմոնելյոզից բուժելու շատ պարզ և արդյունավետ միջոց: Նրանք հավերի խմելու ջրի մեջ խառնում են կաթի և մրգերի մեջ պարունակվող յակտոզ և մաննոզ սախարիդներ: Եվ 100-ից 99-ի դեպքում հավերը բուժվում են:

Սակայն ապաքինման մեխանիզմն առայժմ մնում է անբացատրելի: Հնարավոր է, որ սախարիդներն արգելակում են սալմոնելյոզի հասունացումն ու զարգացումը: Սակայն սա այնքան էլ հավանական չէ: Ավելի շուտ, սախարիդները հավերի ստամոքսում սնունդ են դառնում և բազմացնում մանրէների մի ինչ-որ տեսակ, որը ոչնչացնում է սալմոնելյոզը:

Ցավոք, շաքարն ի զորու չէ օգնելու սալմոնելյոզով հիվանդ մարդկանց: Այս, իսկապես պարզ և արդյունավետ դեղամիջոցը, հավերի համար է միայն:

«НПАТАК»—
ГАЗЕТА НАЦИОНАЛЬНОЙ
АКАДЕМИИ НАУК РА

"NPATAK"
NEWSPAPER OF THE NATIONAL
ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

Տնօրեն՝ Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ. Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, հեռախոս՝ 22-44-26:
Թերթը տպագրվել է ՀՀ կառավարության «Պարբերական» հրատարակչությունում: Հասցեն՝ Արշակունյաց 2: Դասիչ՝ 89288: Գրանցման վկայական 838: Ստորագրված է տպագրության
15.05.1995 թ.: